

1963

3K23

D-94

39p

Վ. Ի. ԼԵՆԻՆ

ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ
ՄԵՐ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ
ՊԼԱՏՈՐՄԻ ՆԱԽԱԳԻԾ

3K23

7-94

ՊԵՏՏՐԱՏ

ԿՈՄՍՈՒՅԱՆ ԳՐԱԳԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՍԵՐԵՎԱՆ ● 1989

01 JUN 2005
ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈՂՈՐ ՅԵՐԿԲՆԵՐԻ, ՄԻԱՑՍ

14 NOV 2005

3K23

7-94

սր

Կ. Ի. ԼԵՆԻՆ

ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ
ՄԵՐ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԵԶ

ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԼԱՏՖՈՐՄԻ ՆԱԽԱԳԻԾ

2/15
16

Պ Ե Տ Հ Ր Ա Ց

ՀԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ • 1989

11 SEP 2013

7963



2124
39

В. И. ЛЕНИН
ЗАДАЧИ ПРОЛЕТАРИАТА
В НАШЕЙ РЕВОЛЮЦИИ

ПРОЕКТ ПЛАТФОРМЫ
ПРОЛЕТАРСКОЙ ПАРТИИ

Аргиз—Издательство полит. литературы,
Ереван, 1939

Մեր ապրած սլատմական մոմենտը Ռուսաստանում բնո-
րոշվում է հետեյալ հիմնական գծերով.

ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ԲՆՈՒՅԹԸ

1. Հին ցարական իշխանությունը, վորը ներկայացնում
էր պետական ամբողջ մեքենան (բանակը, վոստիկանությու-
նը, չինովնիկությունը) կառավարող ձորտատեր կալվածա-
տերերի միայն մի խմբակ, ջարդված է և վերացված, սակայն
վերջնականապես չի ջախջախված: Միապետությունը ձևա-
կանորեն վոջնչացված չէ: Ռոմանովների ավազակախումբը
չարունակում է միապետական ինտրիգները: ձորտատեր
կալվածատերերի վիթխարի հողատիրությունը լիկվիդացի-
այի չի յենթարկված:

2. Պետական իշխանությունը Ռուսաստանում անցել է
նոր դասակարգի, այն է՝ բուրժուազիայի և բուրժուակա-
նացած կալվածատերերի ձեռքը: Այդչափով բուրժուա-
դեմոկրատական հեղափոխությունը Ռուսաստանում ավարտ-
ված է:

Իշխանության դլուխ անցած բուրժուազիան բլոկ (գա-
չինք) է կնքել բացահայտ միապետական տարրերի հեռ
(Գուչկովը և այլ՝ կադետներից ավելի աջ կանգնած քաղա-
կաններ), վորոնք 1906—1914 թ. թ. իրենց ցուցարներել

եյին չլսված ջանադիր աջակցութեամբ Նիկողայ Արյունաբուին և Ստոլիպին-Դաճին: Լվովի և Ընկ. նոր բուրժուական կառավարութեանը փորձեց և սկսեց բանակցութեաներ վարել Ռոմանովների հետ՝ Ռուսաստանում միապետութեանը վերականգնելու մասին: Այդ կառավարութեանը, հեղափոխական Ֆրազի աղմուկի տակ, իշխող պաշտոնների յե նշանակում հին կարգերի կողմնակիցներին: Այդ կառավարութեանն աշխատում և վորքան կարելի յե քիչ ռեֆորմի յենթարկել պետական մեքենայի ամբողջ ապարատը (բանակը, վոստիկանութեանը, չինովնիկութեանը), հանձնելով այն բուրժուազիայի ձեռքը: Մասսայական գործողութեաների հեղափոխական նախաձեռնութեանը և իշխանութեանը ժողովրդի ձեռքով, ներքևից նվաճելուն՝ հեղափոխութեան իրական հաջողութեանների այդ միակ յերաշխիքին, նոր կառավարութեանն արդեն սկսել և ամեն կերպ արգելք հանդիսանալ:

Այդ կառավարութեանը մինչև այժմ դեռևս նույնիսկ չի նշանակել Սահմանադիր ժողովի գումարման ժամկետը: Կառվածատիրական հողատիրութեանը, ճորտատիրական ցարիզմի այդ նյութական հիմքին, նա ձեռք չի տալիս: Կապիտալիստների մոնոպոլիստական Ֆինանսական կաղմակերպութեանների, խոշոր բանկերի, սինդիկատների ու կարտելների և այլոց գործողութեանների հետաքննմանը, գործողութեաններ հրապարակելուն և վերահսկելուն այդ կառավարութեանը չի յել մտածում ձեռնարկել:

Նոր կառավարութեան ամենագլխավոր, վճռողական մի-նիստրական պաշտոնները (ներքին գործերի մինիստրութեան, ռազմական մինիստրութեան, այսինքն՝ բանակի, վոստիկանութեան, չինովնիկութեան, մասսաների կեղեքման ամբողջ ապարատի կառավարումը) պատկանում են ակընհայտնի միապետականներին և խոշոր կալվածատիրական հողատիրութեան կողմնակիցներին: Կադետներին, յերեկվա հանրապետականներին, ակամա հանրապետականներին տրամադրված են յերկրորդական պաշտոններ, վորոնք ուղղակի

հարաբերութեան չունեն ժողովրդի նկատմամբ հրամանատարութեանն անկող և պետական իշխանութեան ապարատի հետ: Աշխատավորականների ներկայացուցիչ և «նույնպես սոցիալիստ» Ա. Կերենսկին պարզապես վոչ մի դեր չի խաղում, բացի ժողովրդի դեռնութեանն ու ուշադրութեանը հնչուն Ֆրազներիով քնեցնելուց:

Նոր բուրժուական կառավարութեանը բոլոր այս պատճառներով նույնիսկ ներքին քաղաքականութեան ասպարեզում արժանի չե պրոլետարիատի կողմից վոչ մի վստահութեան, և պրոլետարիատի վորեն աջակցութեանն այդ կառավարութեանն անթույլատրելի յե:

ՆՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒԹՅՈՒՆԸ

3. Արտաքին քաղաքականութեան ասպարեզում, վորն այժմ որչեղտիվ պայմանների հետևանքով քաշված և առաջին պլանի վրա, նոր կառավարութեանը հանդիսանում և խմբերիալիստական պատերազմը շարունակելու կառավարութեան, — մի պատերազմ, վոր մղվում և Անգլիայի, Ֆրանսիայի և այլ խմբերիալիստական պետութեանների հետ դաշնակցած՝ կապիտալիստական ավարը բաժանելու, մանր ու թույլ ժողովուրդներին խեղդելու համար:

Նոր կառավարութեանը, վոր հպատակված և ռուսական կապիտալի և նրա հզոր հովանավոր ու տիրակալ հանդիսացող՝ ամբողջ աշխարհի ամենահարուստ անգլո-ֆրանսական խմբերիալիստական կապիտալի շահերին, հակառակ այն ցանկութեաններին, վոր ամենավորջակի կերպով արտահայտված են Ռուսաստանի ժողովուրդների անտարակոտելի մեծամասնութեան անունից՝ Զինվորների և Բանվորների զեպուտատների Խորհրդի միջոցով, վոչ մի իրական քայլ չի արել դադարեցնելու կապիտալիստների շահերի համար տեղի ունեցող ժողովուրդների սպանդը: Նա նույնիսկ չհրապարակեց այն ակնհայտնի հափշտակողական բովանդա-

կությունն ունեցող դադանի դաշնագրերը (Պարսկաստանը բաժանելու, Զինաստանը կողոպտելու, Թյուրքիան կողոպտելու, Ալստրիան բաժանելու, Արևելյան Պրուսիան խլելու, գերմանական դադութները խլելու մասին և այլն), վորոնք Ռուսաստանը հայտնապես կապում են անգլո-Ֆրանսական իմպերիալիստական հափշտակողական կապիտալի հետ: Նա հաստատեց այդ պայմանագրերը, վոր կնքել եր ցարիզմը, վորը դարերի ընթացքում կողոպտել ու կեղեքել եր ավելի շատ ժողովուրդներին, քան մյուս տերաններն ու բռնապետները,—ցարիզմը, վորը վո՛չ միայն կեղեքում, այլև խայտառակում ու այլաբերում եր վելիկոռուս ժողովրդին, նրան դարձնելով մյուս ժողովուրդների՝ գահին:

Հակառակ Բանվորների և Զինվորների Դեպուտատների կոնգրեսների միջոցով Ռուսաստանի ժողովուրդների մեծամասնության պարզորոշ արտահայտած պահանջներին, նոր կառավարութունը, հաստատելով այդ խայտառակ և ավազակային պայմանագրերը, բոլոր պատերազմող ժողովուրդներին անմիջական գինադադարի առաջարկ չարեց: Նա գլուխն ադատեց հանդիսավոր, բարձրագույն, տոնական, բայց միանգամայն սնամեջ գեկլարացիաներով ու ֆրագնեքով, վորոնք բուրժուական գիմանազետների բերանում միշտ ծառայել են և ծառայում են կեղեքվող ժողովրդի դյուրահավատ և միամիտ մասսաներին խաբելու համար:

4. Այս պատճառով նոր կառավարութունը վոչ միայն նույնիսկ թմենաչնչին վստահության արժանի չե արտաքին քաղաքականության ասպարեզում, այլև հետադադում պահանջներ առաջադրել նրան, վոր ազդարարի Ռուսաստանի ժողովուրդների կամքը հաշտություն հաստատելու, վոր նա հրաժարվի աննեքսիաներից և այլն և այլն, իրականում միայն նշանակում ե ժողովրդին խաբել, անիրադրժելի հույսեր ներշնչել նրան, նրա գիտակցության պայծառացումը հետաձգել, նրան անուղղակի հաշտեցնել պատերազմը շարունակելու հետ,—այն պատերազմը, վորի իսկական սոցիալական բնույթը վորոշվում ե վո՛չ թե բարի ցան-

կություններով, այլ պատերազմ վարող կառավարության դասակարգային բնույթով, տվյալ կառավարության ներկայացրած դասակարգի կապով Ռուսաստանի, Անգլիայի, Ֆրանսիայի իմպերիալիստական ֆինանսական կապիտալի հետ և այլն, այն ռեալ իրական քաղաքականությամբ, վոր վարում ե այդ դասակարգը:

ՅՈՒՐՈՐԻՆԱԿ ՅԵՐԿԵՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՆՐԱ ԳԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՆՇԱՆՍԱԿՈՒԹՅՈՒՆԸ

5. Մեր հեղափոխության ամենագլխավոր առանձնահատկությունը, առանձնահատկություն, վորն ամենից ավելի հրամայականությամբ պահանջում ե խոհական վերաբերմունք դեպի ինքը,—դա հեղափոխության հաղթանակի առաջին իսկ որերից ստեղծված յերկիշխանություներն ե:

Այդ յերկիշխանությունն արտահայտվում ե յերկու կառավարությունների գոյությամբ. բուրժուազիայի գլխավոր, իսկական, իրական կառավարությամբ, Լվովի և Ընկ. «Ժամանակավոր կառավարությամբ», վորն իր ձեռքին ե պահում իշխանության բոլոր որդանները, և լրացուցիչ, ոժանդակ, «վերահսկող» կառավարությամբ, հանձին Բանվորների և Զինվորների Դեպուտատներին Պետրոգրադի կոնգրեսի, վորն իր ձեռքին չունի պետական իշխանության որդաններ, բայց անմիջականորեն հենվում ե ժողովրդի ակներև անպայման մեծամասնության վրա, գինված բանվորների ու զինվորների վրա:

Այդ յերկիշխանության դասակարգային աղբյուրը և դասակարգային նշանակությունն այն ե, վոր 1917 թ. մարտի ռուսական հեղափոխությունը վո՛չ միայն բնաջինջ արեց ամբողջ ցարական միապետությունը, վո՛չ միայն ամբողջ իշխանությունը բուրժուազիային հանձնեց, այլև կիպ հասավ պրոլետարիատի և գյուղացիության հեղափոխական դեմոկրատական գիտատուրային: Հենց այդպիսի գիտատուրա (այսինքն՝ իշխանություն, վորը հենվում ե վո՛չ թե

որենքի, այլ բնակչութեան զինված մասնանքերի անմիջական ուժի վրա) և հատկապէս մատնանշված դասակարգերի դիկտատուրա յեն հանդիսանում Պետրոգրադի և ուրիշ վայրերի բանվորների ու զինվորների դեպուտատների տեղական խորհուրդները:

6. Ռուսական հեղափոխութեան հետեյալ վերին աստիճանի կարեւոր առանձնահատկութիւնն այն է, Վոր Զինվորների ու Բանվորների դեպուտատներին Պետրոգրադի խորհուրդը, Վորը՝ ըստամենայնի դատելով՝ վայելում է տեղական խորհուրդների մեծամասնութեան վստահութիւնը, հոգարակամ հանձնում է պետական իշխանութիւնը բուրժուազիային և նրա ժամանակավոր Կառավարութեանը, հոգարակամ զիջում է նրան առաջնութիւնը, նրա հետ համաձայնութիւն կնքելով նրան պաշտպանելու համար, սահմանափակվում է դիտողի, Սահմանադիր Ժողովի հրապարման գործին վերահսկողի դերով (Ժողովի, Վորի հրապարման ժամկետը ժամանակավոր Կառավարութիւնը մինչև որսնույնիսկ չի հրապարակել):

Այդ չափազանց յուրորինակ, պատմութեան մեջ այդ ձևով չտեսնված հանգամանքն ստեղծել է յերկու դիկտատուրայի միախառնում—բուրժուազիայի դիկտատուրայի (Վորովհետև Լվովի և Ընկ. կառավարութիւնը դիկտատուրայ է, այսինքն՝ իշխանութիւն, Վորը հենվում է վո՛չ թե որենքի և վո՛չ ել վաղորդը արտահայտած Ժողովրդական կամքի, այլ ուժով դավթելու վրա, ընդվորում այդ գավթումն իրազործված է Վորոշ դասակարգի, այն է՝ բուրժուազիայի կողմից) և պրոլետարիատի ու դյուղացիութեան դիկտատուրայի (Բանվորների և Զինվորների Դեպուտատների խորհուրդ):

Ամենախորք տարակույս անգամ չկա, Վոր այդ «Հյուսվածքն» ի վիճակի չէ յերկար դիմանալու: Պետութեան մեջ յերկու իշխանութիւն լինել չի կարող: Նրանցից մեկը պետք է չքանա, և Ռուսաստանի ամբողջ բուրժուազիան բոլոր ուժերով, ամեն տեսակ միջոցներով, ամենուրեք արդեն աշ-

խատում է վերացնել և ուժասպառ անել, ի չիք դարձնել Զինվորների և Բանվորների Դեպուտատների խորհուրդը, ստեղծել բուրժուազիայի միահեծան իշխանութիւն:

Յերկիշխանութիւնն արտահայտում է միայն անցման մոմենտը հեղափոխութեան դարգացման մեջ, յերբ վերջինս առաջ է անցել սովորական բուրժուա-դեմոկրատական հեղափոխութիւնից, բայց դեռ չի հասել պրոլետարիատի և դյուղացիութեան «մաքուր» դիկտատուրային:

Այդ անցողիկ անկայուն վիճակի դասակարգային նշանակութիւնը (և դասակարգային բացատրութիւնը) հետևվալն է՝ ինչպես և ամեն մի հեղափոխութիւն, մեր հեղափոխութիւնը պահանջել է մեծագույն հերոսութիւն, մասսայի ինքնագոհաբերում ցարիզմի դեմ կովկոս համար, այլև միանգամից շարժման մեջ է գրավել չլաված ահագին քանակութեամբ քաղքենիներ:

Յուրաքանչյուր իսկական հեղափոխութեան զլխավոր, դիտական և գործնական-քաղաքական նշաններից մեկն այն է, Վոր արտասովոր արագ, շեշտակի, կտրուկ կերպով ավերանում է այն «քաղքենիների» թիվը, Վորոնք անցնում են ակտիվ, ինքնուրույն, գործոն մասնակցութեան՝ քաղաքական կյանքում, պետութեան շինարարութեան մեջ:

Այդպես ել Ռուսաստանը: Ռուսաստանն այժմ յետում է: Միլիոնավոր և տասնյակ-միլիոնավոր մարդիկ, Վորոնք քաղաքականորեն քնած եյին տասը տարի, քաղաքականորեն բնկճված ցարիզմի դարհուրելի հարստահարութեամբ և կալվածատերերի ու Փարրիկանտների համար թախած տաժանակիր աշխատանքով,—արքնացել են և դիմել դեպի քաղաքականութիւն: Իսկ ուլքե՞ր են այդ միլիոնավորներն ու տասնյակ-միլիոնավորները: Մեծ մասամբ մանր տնտեսատերեր, մանր բուրժուաներ, մարդիկ, Վորոնք կանգնած են կապիտալիստների և վարձու բանվորների միջև: Ռուսաստանը բոլոր յեկրոպական յերկրներից ամենից ավելի մանր-բուրժուական յերկիրն է:

Վիթխարի մանր-բուրժուական ալիքը Վորոդել է ամեն

ինչ, ճնշել և գիտակից պրոլետարիատին վո՛չ միայն իր թվով, այլև զաղափարապես, այսինքն՝ քաղաքականութեան նկատմամբ ունեցած մանր-բուրժուական հայացքներով վարակել, ընդգրկել և բանվորների խիստ լայն շրջաններ:

Մանր բուրժուազիան կյանքում կախում ունի բուրժուազիայից, ինքն ապրելով իրրև տնտեսատեր և վոչ իրրև պրոլետար (հասարակական արտադրութեան մեջ զբաղած տեղի իմաստով), և իր մտածելակերպով զնում և բուրժուազիայի հետևից:

Գյուրահավատ-անգիտակցական վերաբերմունք դեպի կապիտալիստները, դեպի խաղաղութեան ու սոցիալիզմի այդ վատթարագույն թշնամիները, — ահա ինչն է բնորոշում մասնաճյուղի արդի քաղաքականությունը Ռուսաստանում, ահա թե հեղափոխական արագություն ինչ առաջ յեկավ բոլոր յեվրոպական յերկրներից ավելի մանր-բուրժուական յերկրի սոցիալ-տնտեսական հողի վրա: Ահա «համաձայնութեան» դասակարգային հիմքը (ընդգծում եմ, վոր նկատի ունեմ վոչ այնքան ձևական համաձայնությունը, վորքան փաստական աջակցությունը, լուռ համաձայնությունը, իշխանությունը դյուրահավատ-անգիտակցական գիշումը) ժամանակավոր Կառավարության և Բանվորների ու Ձինվորների Դեպուտատների խորհրդի միջև առաջացած «համաձայնություն», — համաձայնություն, վորը Գուչկովներին տվել է յուզոտ պատառը, իսկական իշխանությունը, իսկ խորհրդին — խոստումներ, պատիվ (միառժամանակ), չողոքորթություն, Ֆրադներ, հավաստիացումներ, Կերենսկիների հաճոյախոսություններ:

Պրոլետարիատի անբավարար քանակը Ռուսաստանում, նրա անբավարար գիտակցականությունն ու կազմակերպվածությունը — ահա նույն մեզալի մյուս յերեսը:

Բոլոր նարոդնիկական կուսակցությունները, ընդհուպ մինչև սոցիալիստ-հեղափոխականները, միշտ մանր-բուրժուական են յեղել: Կազմկոմի կուսակցությունը (Չեխիձե, Ծեբեթելի և այլք)՝ նույնպես. անկուսակցական հեղափո-

խականները (Ստեկլով և մյուսներ) համապարապես յեռ-թարկվել են ալիքին, կամ չեն հաղթահարել, չեն հաջողել հաղթահարել ալիքը:

ՏԱԿՏԻԿԱՅԻՆ ՆԱԽԸՆԹԱՅԻՑ ԲՂԽՈՂ ՅՈՒՐՈՐԻՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

7. Փաստական վիճակի վերը մատնանշած յուրորինակությունից բխում և տվյալ մոմենտի՝ մարքսիստի համար պարտադիր տակտիկայի յուրորինակությունը, — մարքսիստի, վորը պարտավոր է հաշվի առնել ոբյեկտիվ փաստերը, մասսաներին ու դասակարգերին, այլ վոչ թե անձերին և այլն:

Այդ յուրորինակությունն առաջին պլանն է մղում «քաղաքի և լեզի ածելը հեղափոխական-դեմոկրատական Ֆրադների քաղցրիկ ջրի մեջ» (ինչպես զարմանալի սրամիտ կերպով արտահայտվեց մեր կուսակցության Կենտկոմից իմ ընկերը, Տեոդորովիչը, Յերկաթուղային Ծառայողների ու Բանվորների Համառուսաստանյան Համադուժարի յերեկվա նիստում, Պրտերում): Քննադատության գործը պիտի լինի՝ պարզաբանել մանր-բուրժուական կուսակցությունների՝ սոցիալիստ-հեղափոխականների և սոցիալ-դեմոկրատների սխալները, նախապատրաստել և համախմբել գիտակից-պրոլետարական, կոմունիստական կուսակցության տարրերը, ազատել պրոլետարիատն «ընդհանուր» մանր-բուրժուական մոլուցքից:

Այդ քվում է «միայն» պրոպագանդիստական աշխատանք: Իրականում այդ ամենագործնական հեղափոխական աշխատանքն է, վորովհետև չի կարելի առաջ շարժել հեղափոխությունը, վորը կանգ է առել, Ֆրադակոն և յեղել, «քայլում է կանգնած տեղում», վո՛չ քե արտաքին արգելքների, վո՛չ թե բուրժուազիայի կողմից գործադրած բռնութեան պատճառով (Գուչկովը դեռ միայն լուկ սպառնում է բռնություն գործադրել գինվորական մասսայի դեմ), այլ

մասսաների դյուրահալատ անդիտակցականության շնորհիվ:

Միայն այդ դյուրահալատ անդիտակցականության դեմ պայքարելով և (իսկ դրա դեմ պայքարել կարելի չե և պետք և բացառապես զաղափարորեն, ընկերաբար համոզելով, կյանքի փորձը մատնանշելով), վոր մենք կարող ենք ազատազրկելով հեղափոխական ֆրագի թաղամորող սանձարձակութունից և իսկապես առաջ հրել ինչպես պրոլետարական գիտակցությունը, այնպես ել մասսաների գիտակցությունը, այնպես ել նրանց խիղիւս վճռական ձեռներեցությունը տեղերում, ազատություններէ, դեմոկրատիայի, ամբողջ հողի համաժողովրդական տիրապետության սկզբունքի ինքնազրուխ իրազօրծումը, զարգացումն ու ամրացումը:

8. Բուրժուական և կալվածատիրական կառավարությունների համաշխարհային փորձը մշակել և ժողովրդին ճշման տակ սրահելու յերկու յեղանակ: Առաջինը բռնությունն է: Նիկոլայ Ռոմանով I—Նիկոլայ Պաւլինը և Նիկոլայ II—Արյունաբերուն ցույց տվին ռուս ժողովրդին այդպիսի, դահճական յեղանակի հնարավոր և անհնարին մաքսիմումը: Բայց երա մի ուրիշ յեղանակ, վորը լավագոյն կերպով մշակել և անդիտական և Փրանսական բուրժուազիան, «խրատվելով» մի շարք մեծ հեղափոխություններից և մասսաների հեղափոխական շարժումներից: Այդ—խաբելու, չողորթության, Փրագի, միլիոնավոր խոստումների, գրոշանոց վողորմությունների, անկարելորդ զիջման, կարելորդ պահպանման յեղանակն է:

Մոմենտի յուրորինակությունը Ռուսաստանում—զապիտապտույտ արագ անցումն է առաջին յեղանակից դեպի յերկրորդը, ժողովրդի վրա բռնանալուց՝ դեպի ժողովրդին շոգոփոքելը, դեպի նրան խոստումներով խաբելը: Кот-Васька слышит да ест (կատուն լսում և և ուտում): Միլիոնավոր և Գուչկովն իրենց ձեռքին ունեն իշխանությունը, պաշտպանում են կապիտալի շահությունները, իմպերիալիստական պատերազմ են մղում ռուսական և անգլո-ֆրանսական կապիտալի շահերի համար,—և ոճիքներն ազատում են

խոստումներով, դեկլամացիայով, եֆեկտավոր հայտարարություններով՝ ի պատասխան այնպիսի «խոհարարների» ճառերի, վորպիսիք են Չխեիձեն, Մերեթելին, Ստեկլովը, վորոնք սպառնում են, կշտամբում, թախանձում, աղերսում, պահանջում, հռչակում... կատուն լսում և և ուտում:

Յեւ որեցոր դյուրահալատ անդիտակցականությունն ու անդիտակցական դյուրահալատությունը պիտի վերանան, մանավանդ պրոլետարների և ամենաչափոր դյուղացիների մեջ, վորոնց կյանքը (նրանց հասարակական-տնտեսական դրությունը) սովորեցնում և չհալատալ կապիտալիստներին:

Մանր բուրժուազիայի առաջնորդները «պետք է» սովորեցնեն ժողովրդին վստահություն տածելու բուրժուազիային: Պրոլետարները պետք է անվստահություն սովորեցնեն նրան:

ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՆՐԱ ԴԱՍՍԿԱՐԳԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

9. «Գրեթե ամեն ինչ» վողդած մանր-բուրժուական ալիքի ամենախոշոր, ամենացայտուն արտահայտությունը պիտի համարել հեղափոխական պաշտպանողականութունը: Հենց այդ և ռուսական հեղափոխության հետագա առաջընթացի և հաջողության ամենակատաղի թշնամին:

Ով յենթարկվել և այս կետում և չի կարողացել ազատազրկել,—նա կորած և հեղափոխության համար: Բայց մասսաներն այլ կերպ են յենթարկվում, քան առաջնորդները, և այլ կերպ, զարգացման այլ ընթացքով, այլ յեղանակով են ազատազրկում:

Հեղափոխական պաշտպանողականությունը մի կողմից՝ բուրժուազիայի կողմից մասսաներին խաբելու արդյունքն է, դյուղացիների և բանվորների մի մասի դյուրահալատ անդիտակցականության արդյունքը, իսկ մյուս կողմից՝ արտահայտությունն է մանր տնտեսատիրոջ շահերի ու հայե-

ցաղերի, — անտեսադիմելի, վորը վորոշ չափով շահագործող-
ված և աննեքսիաներով ու բանկային շահույթներով և
վորը «սրբությամբ» պահում և ցարիզմի տրադիցիաները,
ցարիզմի, վորը ալլասերում եր վելիկոռոսներին՝ նրանց
դահույթյուն անել ասելով մյուս ժողովուրդների նկատ-
մամբ:

Բուրժուազիան խաբում և ժողովրդին, ոգտագործելով
հեղափոխության աղնով հպարտությունը և այնպես պատ-
կերացնելով դործը, թե իբր Խուսանտանի կողմից մղվող
պատերազմի սոցիալ-ֆալաֆալան բնույթը փոխվել և հե-
ղափոխության այդ ետապի շնորհիվ, ցարական միապետու-
թյունը Գուչկով-Միլյուկովյան համարյա-հանրապետու-
թյամբ փոխարինվելու շնորհիվ: Յեւ ժողովուրդը — մամա-
նակալորապես — հավատաց նշանակալից չափով շնորհիվ
հնավանդ նախապաշարումների, վորոնք ստիպում են Ռու-
սաստանի մյուս ժողովուրդների մեջ, բացի վելիկոռոսնե-
րից, տեսնել վելիկոռոսների մի տեսակ սեփականությունը
կամ կարյածքը: Յարիզմի ձեռքով վելիկոռոս ժողովրդի
ստոր ալլասերումը, վորը սովորեցրել և մյուս ժողովուրդ-
ների մեջ ինչ-վոր ցած բան տեսնել, մի ինչ-վոր «իրավուն-
քով» վելիկոռոսիային պատկանող բան, չեր կարող միան-
գամից փերանալ:

Մեզնից հմուտքյուն և պահանջվում՝ բացատրելու մաս-
սաներին, վոր պատերազմի սոցիալ-քաղաքական բնույթը
վորոշվում և վո՛չ թե անձերի ու խմբակների, անգամ ժո-
ղովուրդների «բարի կամքով», այլ պատերազմ վարող դա-
սակարգի դրությամբ, գաղափարի ֆալաֆալանությամբ,
վորի շարունակությունն և հանդիսանում պատերազմը, կա-
պիտալի՝ վորպես արդի հասարակության մեջ տիրապետող
տնտեսական ուժի՝ կապերով, միջադպային կապիտալի իմ-
պերիալիստական բնույթով, Ռուսաստանի Ֆինանսական,
բանկային, գլխավորապես կախումով Անգլիայից ու
Ֆրանսիայից և այլն: Հմտորեն, մասսաների համար հա-
կանալի կերպով բացատրել այս ամենը հեշտ չե, առանց

սխալների մեզնից վոչ վոք չեր կարողանա միանգամից անել
այդ:

Բայց մեր պրոպագանդայի ուղղությունը, կամ ավելի
ճիշտ՝ բովանդակությունը պիտի այդպիսին լինի և միայն
այդպիսին: Նվազագույն գիջումն իսկ հեղափոխական
պաշտպանողականությանը դավանանքյուն և սոցիալիզ-
մին, լիակատար հրաժարումն ինտերնացիոնալիզմից, ինչ
գեղեցիկ Փրազներով, ինչ «գործնական» նկատառումներով
եւ արդարացվի այդ:

«Կորչի պատերազմը» լողունդը, իհարկե, ճիշտ և, բայց
այն նկատի չի առնում մոմենտի խնդիրների յուրորինակու-
թյունը, լայն մասսային այլ կերպ մոտենալու անհրա-
ժեշտությունը: Իմ կարծիքով այն նման և «կորչի ցարը»
լողունդին, վորով «հին լավ ժամանակների» անհմուտ ագի-
տատորը պարզ և ուղղակի գյուղ եր գնում — և ծեծ ուտում:
Հեղափոխական պաշտպանողականության մասսայական ներ-
կայացուցիչները քարեխիղմ են, — վոչ անձնական, այլ դա-
սակարգային իմաստով, այսինքն՝ նրանք պատկանում են
այնպիսի դասակարգերի (բանվորներ և ամենաչքավոր գյու-
ղացիներ), վորոնք իսկապես չեն շահում աննեքսիաներից
և ոտար ժողովուրդներին խեղդելուց: Դա այն չե, ինչ
բուրժուաները և պ. պ. «ինտելիգենտները», վորոնք հիա-
նալի կերպով գիտեն, վոր չի կարելի հրաժարվել աննեքսի-
աներից, չհրաժարվելով կապիտալի տիրապետությունից,
և անխղճորեն խաբում են մասսաներին գեղեցիկ Փրազով,
անչափ խոստումներով, անհամար հավաստիացումներով:

Պաշտպանողականության մասսայական ներկայացուցիչը
գործին նայում և հասարակ ձեով, քաղքենու պես. «յես
աննեքսիա չեմ ուղում. ինձ վրա յե «քում» գերմանացին,
նշանակում ե՝ յես պաշտպանում եմ արդար դործ և վոչ թե
ինչ-վոր իմպերիալիստական շահեր»: Այդպիսի մարդուն
հարկավոր և բացատրել և նորից բացատրել, վոր բանն իր
անձնական ցանկությունները չեն, այլ մասսայական, դա-
սակարգային, քաղաքական հարաբերություններն ու պայ-

մանները, այն կապը, վոր դոյություն ունի պատերազմի և կապիտալի շահերի ու բանկերի միջազգային ցանցի միջև և այլն: Պաշտպանողականութեան դեմ մղած միայն այսպիսի պայքարն է լուրջ և խոստանում է հաջողութիւն—գուցէ վոչ շատ արագ, բայց հուսալի և հաստատ:

ԻՆՉՊԵՍ ԿԱՐԵԼԻ ՅԵ ՎԵՐՋԱՑՆԵԼ ՊԱՏԵՐԱԶՄԸ

10. Պատերազմը չի կարելի վերջացնել «ըստ ցանկութեան»: Զի կարելի վերջացնել մի կողմի վորոշմամբ: Զի կարելի վերջացնել «սվինը գետին խրելով», յեթե դործածենք մի պաշտպանողական զինվորի արտահայտութիւնը:

Պատերազմը չի կարելի վերջացնել զանազան յերկրների սոցիալիստների «համաձայնութեամբ», բոլոր յերկրների պրոլետարների «յեւլոյթով», ժողովուրդների «կամքով» և այլն.—բոլոր այդ կարգի Ֆրազները, վորոնցով լին յեն պաշտպանողական և կիսապաշտպանողական, կիսախնայական սոցիալիստական լրագրերի հոդվածները, ինչպես նաև բազմաթիւ բանաձևերը, կոչերը, մանիֆեստները, Զինվորների ու Բանվորների Դեպուտատների Խորհրդի բանաձևերը,—բոլոր այդ Ֆրազները վոչ այլ ինչ են, բայց յեթե մանր բուրժուաների դատարկ, անմեղ, բարի ցանկութիւնները: Զկա ավելի վնասակար բան, քան այդպիսի Ֆրազները «հաշտութեան համար ժողովուրդների [կամքի] դրսևորման», պրոլետարիատի հեղափոխական յեւլոյթների հերքի մասին (ոուսականից հետո՝ «հերթը» գերմանականին և) և այլն: Այդ ամենը լուրջաբանականութիւն է, քաղցրավուն ցնորքներ են, «քաղաքական կամպանիայի» խաղ և այլն, իրականում վասկա կատլի վերաբերյալ առակի կրկնութիւն:

Պատերազմը չի առաջացել զիչատիչ—կապիտալիստների չար կամքով, թեպետե, անկասկած, միայն նրանց շահերի համար է մղվում, միայն նրանց է հարստացում: Պատերազմն առաջացել է համաշխարհային կապիտալի, նրա միլիտարիզմի թելերի ու կապերի կիսդարյա զարգացմամբ: Զի կարելի դուրս պրծնել իմպերիալիստական պատերազմ—

մից, չի կարելի ձեռք բերել գեմոկրատական, վոչ բռնի հաշտութիւն՝ առանց կապիտալի իշխանութիւնը տապալելու, առանց պետական իշխանութիւնը մի այլ դասակարգի պրոլետարիատի ձեռքն անցնելու:

1917 թվի փետրվար—մարտի ոուսական հեղափոխութիւնը յեղել է իմպերիալիստական պատերազմը քաղաքացիական պատերազմի վերածելու սկիզբը: Այդ հեղափոխութիւնն առաջին քայլն է արել պատերազմը դադարեցնելու համար: Միայն յերկրորդ քայլը կարող է ապահովել նրա դադարեցումը, այն է՝ պետական իշխանութեան անցումը պրոլետարիատին: Այդ կլինի «ճակատի» համաշխարհային «ճեղքման» սկիզբը,—կապիտալի շահերի ճակատի, և այդ ճակատը ճեղքելով միայն՝ պրոլետարիատը կարող է փրկել մարդկութիւնը պատերազմի սարսափներից, տալ նրան հաստատուն խաղաղութեան բարիքները:

Յեւ այդ ձեռով կապիտալի «ճակատի ճեղքմանը» միուսաստանի պրոլետարիատին կիս մոտեցրել է ոուսական հեղափոխութիւնը, ստեղծելով Բանվորների Դեպուտատների Խորհուրդներ:

ՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՏԻՊԸ, ՎՈՐՆ ԱՃՈՒՄ Ե ՄԵՐ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԵՋ

11. Բանվորների, Զինվորների, Գյուղացիների և այլ Դեպուտատների Խորհուրդները չեն հասկացված վոչ միայն այն տեսակետից, վոր մեծամասնութեանը պարզ չէ նրանց դասակարգային նշանակութիւնը, նրանց դերը ոուսական հեղափոխութեան մեջ: Նրանք հասկացված չեն նաև այն տեսակետից, վոր հանդիսանում են պետութեան նոր ձեւը, ավելի ճիշտ, նոր տիպը:

Բուրժուական պետութիւններից ամենակատարյալը, առաջափորը պառլամենտական դեմոկրատական հանրապետութեան տիպն է. իշխանութիւնը պատկանում է պառլամենտին. պետական մեքենան, ապարատը և կառավարման մարմինը սովորականն է—մշտական բանակ, վոստիկանու—

թյուն, չինովնիկություն, վորին փաստորեն անկարելի չե պաշտոնանկ անել, վորն արտոնյալ է, ժողովրդից վեր է կանգնած:

Բայց հեղափոխական դարաշրջանները, սկսած XIX դարի վերջից, առաջ են մղում դեմոկրատական պետության քարճրագույն տիպը, այնպիսի պետության, վորը վորոշ տեսակետից դադարում է արդեն, ըստ Ենգելսի արտահայտության, պետություն լինելուց, վորը «բառիս բուն իմաստով՝ պետություն չե այլևս»: Այդ—Փարիզի Կոմունայի տիպի պետություն է, վորը ժողովրդից առանձնացրած բանակն ու վոստիկանությունը փոխարինում է ամբողջ բնակչության ուղղակի և անմիջական սպառադինությամբ: Այդ է Կոմունայի եյությունը, վորը վատաբանել և զրպարտել են բուրժուական հեղինակները, վորին սխալմամբ վերագրել են, ի միջի այլոց, անմիջապես սոցիալիզմ «մտցնելու» մտադրություն:

Հենց այդ տիպի պետություն է սկսել ստեղծել ռուսական հեղափոխությունը 1905 և 1917 թվականներին: Բանվորների, Զինվորների, Գյուղացիների և այլն Դեպուտատների Խորհուրդների հանրապետությունը,—Խորհուրդների, վորոնք միավորված են ժողովրդական ներկայացուցիչների Համառուսաստանյան Սահմանադիր Ժողովում կամ Խորհուրդների Խորհրդում և այլն,—ահա թե ինչն է մեզ մոտ արդեն կյանքի մեջ մտնում, այժմ, ներկայումս, բաղամանիս ժողովրդի նախաձեռնությամբ, վորն ինքնազուխ յուրահատուկ ձևով դեմոկրատիա չե ստեղծում, առանց օպասելու վճ այն բանին, վոր պ. պ. կադետ պրոֆեսորները դրեն պառլամենտական բուրժուական հանրապետության օրենքների իրենց նախագծերը,—վճ ել այն բանին, վոր մանր-բուրժուական «սոցիալ-դեմոկրատիայն» պ. Պլեխանովի կամ Կաուցկու նման պեղանտներն ու ռուսիներն չեն զրաժարվեն մարքսիզմի՝ պետության հարցի վերաբերյալ ուսմունքի իրենց աղավաղումից:

Մարքսիզմը տարբերվում է անարխիզմից նրանով, վոր ընդունում է պետության և պետական իշխանության ան-

կրաժեշտությունը հեղափոխական ժամանակաշրջանում ընդհանրապես, կապիտալիզմից սոցիալիզմին անցնելու դարաշրջանում մասնավորապես:

Մարքսիզմը տարբերվում է պ. պ. Պլեխանովի, Կաուցկու և Ընկ. մանր-բուրժուական, ոպորտունիստական «սոցիալ-դեմոկրատիզմից» նրանով, վոր հիշյալ ժամանակաշրջաններին համար անհրաժեշտ է համարում վաչ այնպիսի պետությունը, վորպիսին է սովորական բուրժուական պառլամենտական հանրապետությունը, այլ ինչպիսին է Փարիզի Կոմունան:

Պետության այս վերջին տիպի գլխավոր տարբերությունները հնից՝ հետևյալներն են՝

Պառլամենտական բուրժուական հանրապետությունից շատ հեշտ է վերադառնալ դեպի միապետությունը (ինչպես և ապացուցել է պատմությունը), վորովհետև անձեռնմխելի չե մնում ճնշման ամբողջ մեքենան՝ բանակը, վոստիկանությունը, չինովնիկությունը: Կոմունան և Բանվորների, Զինվորների, Գյուղացիների և այլն Դեպուտատների Խորհուրդները ջախջախում և վերացնում են այդ մեքենան:

Պառլամենտական բուրժուական հանրապետությունը նեղում, խեղում է մասսաների քաղաքական ինքնուրույն կյանքը, նրանց անմիջական մասնակցությունը պետական ամբողջ կյանքի դեմոկրատական շինարարությանը՝ վարից վեր: Հակառակն են Բանվորների և Զինվորների Դեպուտատների Խորհուրդները:

Վերջինները վերաբոսադրում են պետության այն տիպը, վոր մշակում էր Փարիզի Կոմունան և վորը Մարքսն անվանել է «վերջապես հայտնադործված քաղաքական ձևը, վորի մեջ կարող է տեղի ունենալ աշխատավորների տնտեսական ազատագրումը»:

Սովորաբար առարկում են. ուսու ժողովուրդը դեռ պատրաստված չե Կոմունա «մտցնելու» համար: Դա այն ճորտատերերի փաստարկումն է, վորոնք առում եյին, թե գյուղացին պատրաստված չե ազատության համար: Վաչ մի փոխակերպություն (преобразование), վորը բացարձակա-

պես չի հասունացել թե՛ տնտեսական իրականություն մեջ, թե՛ ժողովրդի ճնշող մեծամասնության գլխավորության մեջ, Կոմունան, այսինքն՝ Բանվորների և Գյուղացիների Դեպուտատների խորհուրդները, չի «մտցնում», չի յենթադրում «մտցնել» և չպետք է մտցնի: Վորքան ավելի ուժեղ և տնտեսական կրախը և պատերազմի առաջացրած ճգնաժամը, այնքան ավելի հրամայական անհրաժեշտություն է քաղաքական ամենակատարյալ ձևը, վորը հեշտացնում է պատերազմի՝ մարդկությանը պատճառած սոսկալի վերքերի բուժումը: Վորքան ավելի քիչ է ուսս ժողովրդի կադմակերպական փորձը, այնքան ավելի վճռաբար պետք է ձեռնարկել բուն ժողովրդի և վոչ թե միայն բուրժուական պոլիտիկանների ու «յեկամտարեր տեղեր» ունեցող չինովնիկների կադմակերպական չինարարությունը:

Վորքան ավելի շուտ թոթափենք պ. պ. Պլեխանովի, Կաուցկու և Ընկ. աղավաղած կեղծ-մարքսիզմի հին նախապաշարումները, վորքան ավելի մեծ ջանասիրությամբ սկսենք ոգնել ժողովրդին իսկույն և ամենուրեք Բանվորների ու Գյուղացիների Դեպուտատների խորհուրդներ կադմելու, ամբողջ կյանքն իրենց ձեռքը վերցնելու, վորքան պ. պ. Լվովները և Ընկ. ավելի ձգձգեն Սահմանադիր Ժողովի գումարումը, այնքան ժողովրդի համար ավելի դյուրին կլինի (Սահմանադիր Ժողովի միջոցով կամ առանց նրան, յեթե Լվովը այն չգումարի շատ յերկար ժամանակ) ընտրությունն անել հոգուտ Բանվորների ու Գյուղացիների Դեպուտատների խորհուրդների Հանրապետության: Բուն ժողովրդի նոր կադմակերպական չինարարությունը դործում սխալները սկզբում անխուսափելի յեն, բայց ավելի լավ է սխալվել և առաջ ընթանալ, քան սպասել, թե յերբ պ. Լվովի հրալիրած իրավաբան պրոֆեսորները որենքներ կդրեն Սահմանադիր Ժողովի գումարման և պառլամենտական բուրժուական Հանրապետությունը հավերժացնելու մասին, Բանվորների ու Գյուղացիների Դեպուտատների խորհուրդները խեղդելու մասին:

Յեթե մենք կադմակերպվենք և հմտորեն առաջ տանենք

մեր պրոպագանդան, վո՛չ միայն պրոլետարները, յայլև գյուղացիություն ինքն տասերորդականը կլինեն վոստիկանությունը վերականգնելու դեմ, անպաշտոնանկելի և արտոնյալ չինովնիկության դեմ, ժողովրդից անջատված բանակի դեմ: Իսկ պետության նոր տիպը հենց այդ է:

12. Վոստիկանության փոխարինումը ժողովրդական միլիցիայով—մի փոխակերպություն (преобразование), վորը բղխում է հեղափոխության ամբողջ ընթացքից և այժմ կենսագործվում է Ռուսաստանի վայրերի մեծ մասում: Մենք պետք է բացատրենք մասսաներին, վոր սովորական տիպի բուրժուական հեղափոխությունների մեծամասնության մեջ այդպիսի փոխակերպություն յեղել է չափազանց կարճատև, և նույնիսկ ամենադեմոկրատական ու Հանրապետական բուրժուազիան վերականգնել է հին, ցարական տիպի վոստիկանությունը, վորն անջատված է յեղել ժողովրդից, գտնվել է բուրժուաների հրամանատարության տակ, ընդունակ է յեղել ամեն կերպ ճնշելու ժողովրդին:

Վոստիկանությունը վերականգնել քույլ չտալու համար կա միայն մեկ միջոց. ոտեղծել համաժողովրդական միլիցիա, ձուլել այն բանակի հետ (մշտական բանակի փոխարինումը ժողովրդի ընդհանուր ազատակնություն): Սկզբիսի միլիցիային պետք է մասնակցեն գլխովին բոլոր 15-ից մինչև 65 տարեկան քաղաքացիներն ու քաղաքացուհիները, յեթե մոտավորապես վերցրած այդ հասակներով թույլատրելի յե վորոշել դեռահասների և ծերունիների մասնակցությունը: Կապիտալիստները պետք է վճարեն վարձու բանվորներին, սպասավորներին և այլն այն օրերի համար, յերբ նրանք կդբաղվեն միլիցիայում հասարակական ծառայությամբ: Առանց ներդրավելու կանանց ինքնուրույն մասնակցության վո՛չ միայն ընդհանրապես քաղաքական կյանքին, այլև մշտական, գլխովին հասարակական ծառայության, խոսք չի կարող լինել վո՛չ միայն սոցիալիզմի մասին, այլև լրիվ և հաստատուն դեմոկրատիայի մասին: Իսկ «վոստիկանություն» այսպիսի ֆունկցիաները, ինչպիսին է հոգատարությունը հիվանդների, անապատան յերե-

խաների, առողջ սննդի մասին և այլն, ընդհանրապես չեն կարող բավարար կերպով իրականացվել, առանց կանանց իրական և վոչ թե միայն թղթի վրա իրավահավասարութեան:

Թույլ չտալ, վոր վերականգնվի վոստիկանութիւնը, ամբողջ ժողովրդի կազմակերպական ուժերը մասնակից անել ընդհանուր միլիցիա ստեղծելու գործին—ահա այն խնդիրները, վոր պրոլետարիատը պետք և առնի մասսաների խորքը հեղափոխութեան պաշտպանութեան, ամբապնդման և դարգացման համար:

Ա.ԳՐԱՐԱՅԻՆ ՅԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ

13. Մենք ներկայումս վորոշակի չենք կարող իմանալ, թե մատիկ ապագայում հզոր աղբարային հեղափոխութիւն կդարգանա՞ արդո՞ք ուսական դյուղում: Մենք չենք կարող իմանալ, թե վերջին ժամանակներս հատկապես վորքան խորն և գնացել դյուղացիութեան անտարակույս դասակարգային բաժանումը մի կողմից՝ բաարակների, վարձու բան-վորների ու ամենաչքավոր դյուղացիների («կիսապրոլետարներ») և մյուս կողմից՝ ունեւոր ու միջակ դյուղացիների (կապիտալիստների ու կապիտալիստիկների): Այդպիսի հարցերը կլուծի և կարող և լուծել միայն փորձը:

Բայց մենք, իբրև պրոլետարիատի կուսակցութիւն, տնայայտան պարտավոր ենք անհապաղ հրապարակ դալ վոչ միայն աղբարային (հողային) ծրագրով, այլև անմիջապէս քարոզելով իրադրութիւն գործնական միջոցներ՝ հոգուտ Ռուսաստանի դյուղացիական աղբարային հեղափոխութեան:

Մենք պետք և պահանջենք բոլոր հողերի նացիոնալիզացիա, այսինքն՝ պետութեան մեջ գտնվող բոլոր հողերի՝ կենտրոնական տէրական իշխանութեան սեփականութիւն դառնալը: Այդ իշխանութիւնը պետք և վորոշի վերաբնակեցման Փոնդի չափը և այլն, նա պետք և վորոշի անտասների պահպանութեան, մեկտրացիայի որենքները և այլն, անպայման արգելի ամեն մի միջնորդութիւն հողի սեփա-

կանատեր պետութեան և նրա կապալառու՝ տնտեսաւորող միջև (արգելի հողի ամեն մի վերահանձնում): Բայց հողի ամբողջ տնորինումը, տիրութեան և ոգտադրոման տեղա-կան պայմանների ամբողջ վորոշումը պետք և գտնվի ամբողջապէս ու բացառապէս ամենեւին վոչ բյուրոկրատական չինովնիկական ձեռքերում, այլ Գյուղացիների Դեպուտատների մարդային և տեղական խորհուրդների ձեռքերում:

Հացի արտադրութեան տեխնիկայի և արտադրութեան չափի բարձրացման նպատակով, ինչպէս նաև ռացիոնալիտը տնտեսութեան զարգացման և նրա նկատմամբ հասարակական վերահսկողութիւն հաստատելու նպատակով, Գյուղացիական Կոմիտեների ներսում մենք պետք և աշխատենք, վորպեսզի յուրաքանչյուր բռնադրաված կալվածատենք, վորպեսզի յուրաքանչյուր բռնադրաված կալվածատիրական կալվածքից կաղմվի խոշոր որինակելի տնտեսութիւն՝ Բատրակների Դեպուտատների խորհուրդների վերահսկողութեան տակ:

Իբրև հակակշիռ մանր-բուրժուական Ֆրադին ու քաղաքականութեանը, վորն իշխում և սոցիալիստ-հեղափոխականների մոտ, մանապէս «սպառնողական» կամ «աշխատավորական» նորմայի, «հողի սոցիալիզացիայի» և այլնի վերաբերյալ դատարկ զրույցներում, պրոլետարիատի կուսակցութիւնը պետք և բացատրի, վոր ապրանքային արտադրութեան պայմաններում մանր տնտեսութեան սիստեմը ի վիճակի չե փրկելու մարդկութիւնը մասսաների չքավորութիւնից և նրանց կեղեքումից:

Առանց Գյուղացիների Դեպուտատների Խորհուրդներն անհապաղ և անպայման պառակտելու՝ պրոլետարիատի կուսակցութիւնը պետք և պարզարանի, վոր անհրաժեշտ են Բատրակների Դեպուտատների հատուկ Խորհուրդներ և Դեպուտատների հատուկ Խորհուրդներ չքավորացույն (կիսապրոլետար) դյուղացիներից, կամ գոնե այդպիսի դասակարգային դրուքում ունեցող դեպուտատների առանձին ժշտական խորհրդակցութիւններ, իբրև առանձին Ֆրակցիաներ կամ կուսակցութիւններ Գյուղացիների Դեպուտատների ընդհանուր Խորհուրդների ներսում: Առանց դրան՝

նարողներին բոլոր քաղցրիկ մանր-բուրժուական Ֆրադ-ները գյուղացիության մասին ընդհանրապես դուրս կղան վորպես ծածկոց՝ քողարկելու չունենոր մասսային խաբելը ունենոր գյուղացիության կողմից, վորը կապիտալիստների ալյաձևություններից մեկն է միայն:

Իբրեւ հակալիւ բուրժուա-լիբերալ կամ զուտ չինովնի-կական այն քարոզի, վոր անում են շատ սոցիալիստ-հեղա-փոխականներ և Բանվորների ու Զինվորների Դեպուտատ-ների Խորհուրդները, խորհուրդ տալով գյուղացիներին մինչև Սահմանադիր Ժողովի հրավիրումը չվերցնել կալվա-ծատիրական հողերը և ազրարային փոխակերպություն (преобразование) չսկսել,—պրոլետարիատի կուսակցու-թյունը պետք է կոչ անի գյուղացիներին անհապաղ ինքնա-զլուխ կերպով իրադործել հողային փոխակերպությունը և տեղերում, Գյուղացիներին Դեպուտատների վորոշումներով, անհապաղ բռնադրավիւ կալվածատիրական հողերը:

Ընդամին առանձնապես կարևոր է պնդել, վոր անհրա-ժեշտ է քարձրացնել աննդամթերքների արտադրությունը Ֆրոնտի զինվորների և քաղաքների համար, վոր բացարձա-կապես անթույլատրելի յե փչացնել կամ վորեւ մնա հասց-նել անասուններին, դործիքներին, մեքենաներին, շենքերին և այլն և այլն:

14. Ազգային հարցում պրոլետարական կուսակցու-թյունը պետք է պաշտպանի նախ և առաջ այն բոլոր ազգե-րի և ժողովուրդների՝ Ռուսաստանից անջատվելու կատա-րյալ ազատության հռչակումն ու անմիջական իրականացու-մը, վորոնք ճշված են յեղել ցարիզմի կողմից, բռնի կեր-պով միացվել են կամ բռնությամբ պահվում են պետության սահմաններում, այսինքն՝ աննեքսիայի յեն յենթարկված:

Աննեքսիաներից հրաժարվելու վերաբերյալ բոլոր հայ-տարարությունները, դեկլարացիաներն ու մանիֆեստները, վորոնց չի զուգակցի անջատման ազատության իրական կեն-սադրծումը, հանդում են բուրժուական խաբեյության՝

Ժողովրդի նկատմամբ, կամ մանր-բուրժուական աճեղ քաղձանքների:

Պրոլետարական կուսակցությունը ձգտում է ստեղծել վորքան կարելի յե ավելի խոշոր պետություն, վորովհետև այդ ձեռնուռ յե աշխատավորներին. նա ձգտում է ազգերի մերձեցման և հետագա միաձուլման, բայց այդ նպատակին նա կամենում է հասնել միայն թե բռնությամբ, այլ բացա-ռապես բոլոր ազգերի բանվոր և աշխատավոր մասսաների ազատ, յեղրայրական միությամբ:

Վորքան ավելի դեմոկրատական լինի ուսական հան-րապետությունը, վորքան ավելի հաջող կազմակերպվի նա, վորպես Բանվորների ու Դյուղացիների Դեպուտատների Խորհուրդների հանրապետություն, այնքան ավելի զորեղ կլինի կամավոր ձուղության ուժը՝ դեպի քոլար ազգերի աշխատավոր մասսաների այդպիսի հանրապետությունը:

Անջատվելու կատարյալ ազատություն, տեղական (և արդային) ամենալայն ինքնալարություն, ազգային փոք-րամասնության իրավունքների մանրամասն մշակված յե-րաչխիքներ—այս է հեղափոխական պրոլետարիատի ծրա-դիրը:

ԿԱՊԻՏԱԼԻՍՏՆԵՐԻ ԲԱՆԿԵՐԻ ՅԵՎ ՍԻՆԴԻԿԱՏՆԵՐԻ ՆԱՅԻՈՆԱԼԻԶՄՑԻՈՆ

15. Պրոլետարիատի կուսակցությունը վոչ մի կերպ չի կարող նպատակ դնել մանր գյուղացիության յերկրում սո-ցիալիզմ «մտցնելու», քանի դեռ բնակչության ճնշող մեծա-մասնությունը չի յեկել այն դիտակցության, վոր սոցիա-լիստական հեղափոխությունն անհրաժեշտություն է:

Բայց միայն «համարյա մարքսիստական» բառերի հե-տեք թաղնալ բուրժուական սոփեստները կարող են այդ ճշմարտությունից հետեցնել այն քաղաքականության ար-դարացումը, վորը կձգձգեր հեղափոխական այնպիսի մի-ջոցների անհապաղ կիրառումը, վորոնք դործնականապես լիովին հատունացած են, հաճախ պատերազմի Ժամանակ

իրականացվել են մի շարք բուրժուական պետաւթյունների հոգմից, խիստ անհրաժեշտ են մեր հասնող տնտեսական լիակատար քայլերի և սովի դեմ պայքարելու:

Այնպիսի միջոցները, ինչպես հողի, կապիտալիստների բոլոր բանկերի և սինդիկատների նացիոնալիզացիան և, կամ, տանկազն, Բանկերների Դեպուտատների խորհուրդների անմիջական վերահսկողութուն սահմանելը նրանց վրա և այլն, բոլորովին չլինելով սոցիալիզմի «ներմուծում», պետք է անպայման պաշտպանվեն և, ըստ հնարավորության, հեղափոխական ճանապարհով իրականացվեն: Առանց այդ միջոցների, վորոնք միայն քայլեր են դեպի սոցիալիզմ և տնտեսապես միանշամայն իրադրոճելի յեն, անհնար է պատերազմի պատճառած վերքերը բուժել և կանխել սպառնացող կրակը. իսկ հեղափոխական պրոլետարիատի կուսակցությունը յերբեք չի վարանի ձեռք բարձրացնելու հենց «պատերազմից» առանձնապես խայտառակ կերպով հարուստացած կապիտալիստների և բանկիրների չլաված բարձր շահութան վրա:

ԻՐԵՐԻ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼՈՒՄ

16. Թուստոտանի բանվոր դասակարգի միջադպիսն պարտականությունները հատկապես այժմ առանձին ուժով առաջին պլանն են մղվում:

Մեր սրերում ինտերնացիոնալիզմով չի յերդվում միայն ծուլը, նույնիսկ չովինիստ-պաշտպանողականները, նույնիսկ պ. պ. Պլեխանովն ու Պոտրեսովը, նույնիսկ կերենսկին ինտերնացիոնալիստ են անվանում իրենց: Այնքան ավելի կենսական և պրոլետարական կուսակցությունն պարտականությունը՝ դողծով ինտերնացիոնալիզմն ամբողջ հասակությամբ, ճշտությամբ և վորոշակիությամբ հակադրել խոսքով ինտերնացիոնալիզմին:

Բոլոր յերկրների բանվորներին ուղղված մերկ հոչերը, պարտադ հավատարմացումները, թե իրենք նվիրված են ին-

տերնացիոնալիզմին, դանազան պատերազմող յերկրներին հեղափոխական պրոլետարիատի յելույթների ուղղակի կամ անուղղակի «հերթ» սահմանելու փորձերը, պատերազմող յերկրների սոցիալիստների միջև հեղափոխական պայքարի վերաբերյալ «համաձայնություններ» կնքելու ճիգերը, հաշտության կամպանիա մղելու նպատակով համադուժարներ հրավիրելու համար իրար անցնելը և այլն և այլն, — այդ բոլորն իրենց որչեպիսի նշանակությամբ՝ վորքան ել անկեղծ լինեն ալդալիսի դադափարների, ալդալիսի փորձերի կամ ալդալիսի պլանների հեղինակները՝ այդ բոլորը միմիայն Փրադյորություն են, լավագույն դեպքում՝ անմեղ, բարի ցանկություններ, վորոնք պիտանի յեն միայն չովինիստների կողմից մասսաներին խարելը քողարկելու համար: Յեվ պաշտպանական խարդախությունն պրիմների մեջ ամենից ավելի ճարպիկ, ամենից ավելի փորձված փրանսական սոցիալ-չովինիստները շատ վաղուց ռեկորդ են սահմանել պաշիֆիստական և ինտերնացիոնալիստական չլաված բարձրագորդը և հնչուն Փրադներով, վորոնք միացած են սոցիալիզմին և ինտերնացիոնալիստ չլաված ստություններ դալաճանելու հետ. իմպերիալիստական պատերազմ մղող միլիտարությունների մեջ մտնելու հետ, վարկերի կամ փոխառությունների համար քվեարկելու հետ (ինչպես Չիեիձեն, Սկորելսկը, Մերեթելին, Ստեկլովը վերջին որերս՝ Թուստոտանում), իր սեփական յերկրում հեղափոխական ջալքարին հակադրելու հետ և այլն և այլն:

Բարի մարդիկ հաճախ մոռանում են համաշխարհային իմպերիալիստական պատերազմի դաժան, դարհուրելի իրադրությունը: Այդ իրադրությունը Փրադներ չի հանդուրժում, նա ծաղրի յե յենթարկում անմեղ, քաղցրիկ բաղձանքները:

Դործով ինտերնացիոնալիզմը մեկ և միայն մեկ է. անձնվեր ալխատանքն իր յերկրում հեղափոխական շարժումն ու հեղափոխական պայքարը դարդացնելու համար, ճիշտ ալդալիսի պալքարի, ճիշտ ալդալիսի դժի պաշտպանություն (պրոպաղանդալով, համակրանքով, նյութապես), և

միմիայն այդ պայմարի պաշտպանությունն առանց բացառության բոլոր յերկրներում:

Բոլոր մնացածը խաղաղությունն է և մանկութիւնը:

Յերեք հոսանք է մշակել միջազգային սոցիալիստական և բանվորական շարժումը պատերազմի յերկուսից ակելի տարիներին ընթացեամբ բոլոր յերկրներում, և ով հեռանում է այդ յերեք հոսանքներն ընդունելու, նրանց վերլուծման, դործով ինտերնացիոնալիստական հոսանքի համար հետևողական պայքար մղելու ռեալ հողից, — նա իրեն դատապարտում է անգործության, անողնականության և սխալների:

Յերեք հոսանքները հետևյալներն են.

1) Սոցիալ-չովինիստներ, այսինքն՝ խոսքով սոցիալիստներ, դործով շովինիստներ. դրանք այն մարդիկ են, վորոնք ընդունում են «հայրենիքի պաշտպանությունն» իմպերիալիստական (և, նախ և առաջ, տվյալ իմպերիալիստական) պատերազմում:

Այդ մարդիկ — մեր դասակարգային հակառակորդներն են: Նրանք անցել են բուրժուազիայի կողմը:

Այդպես է պաշտոնական սոցիալ-դեմոկրատիայի պաշտոնական առաջնորդների մեծամասնութիւնը բոլոր յերկրներում: Պ. պ. Պլեխանովն ու Ընկ.՝ Ռուսաստանում, Շայդեմանները՝ Գերմանիայում, Ռենոդելը, Գեդը, Սամբան՝ Ֆրանսիայում, Բիսսոլտին և Ընկ.՝ Իտալիայում, Հայնդմանը, Փարիականները¹ և «լաբուրիստները»² («բանվորա-

1 «Փարիականները» — 1884 թ. հիմնված Փարիական ուղորդունիստական այն ընկերության անդամներն են, վոր ժխտում էր դատակարգելի պայքարը և բարոյում էր «մուսիցիդալ սոցիալիզմ» ու «պայքար» հանուն մանր սեփորմների:

2 «Լաբուրիստները» — 1906 թ. հիմնված այն «անգլիական բանվորական կուսակցության» (Labour Party) անդամներն են, վոր միավորում էր արեղ-յունիստները, կոոպերատիվները, սոցիալիստական խմբերն ու բանվորական այլ կողմակիցութիւններ՝ բանվորական շարժումն ամբողջովին պաշտամենտական պայքարի հունը մղելու ուղորդունիստական մտադրությամբ: Կուսակցության լիդերներն էյին Հենդերսոնն ու Մակդանալդը (Լենինի բնորոշումով՝ «անգլիական Կերենսկիները կամ Շայդեմանները»):

կան կուսակցութեան» առաջնորդները)՝ Անգլիայում, Իրան-տինդը և Ընկ.՝ Շվեդիայում, Տրուլստրան և նրա կուսակցութիւնը՝ Հոլանդիայում, Ստաուինդը և նրա կուսակցութիւնը՝ Դանիայում, Վիկտոր Բերգերը և մյուս «հայրենիքի պաշտպանները»՝ Ամերիկայում և այլն:

2) Յերկրորդ հոսանքը՝ այսպես կոչված «կենտրոնը» այն մարդիկ են, վորոնք տատանվում են սոցիալ-չովինիստների և դործով ինտերնացիոնալիստների միջև:

Ամբողջ «կենտրոնը» յերդվում է աստուծու անունն և տալիս, թե իրենք մարքսիստներ են, ինտերնացիոնալիստներ, թե իրենք կողմնակից են հաշտության, կառավարութեան վրա ամեն տեսակ «հնչումներ» դործադրելուն, կողմնակից են, վոր իրենց կառավարութեանն առաջադրվեն ամեն տեսակ «պահանջներ»՝ «հանդես բերելու ժողովրդի հաշտութեան կամքը», կողմնակից են ամեն տեսակ կամախախտներին հողուտ հաշտութեան, հողուտ հաշտութեան առանց աննեքսիաների և այլն և այլն — և հոգաւտ հաշտութեան սոցիալ-չովինիստների հետ: «Կենտրոնը» կողմնակից է «միասնութեան», կենտրոնը դեմ է պառակտման:

«Կենտրոնը» բարձի մանր-բուրժուական Փրադի, խոսքով ինտերնացիոնալիզմի, դործով յերկշոտ ուղորդունիզմի և սոցիալ-չովինիստների հանդեպ հաճոյակատարութեան թաղավորութիւնն է:

Հարցի առանցքն այն է, վոր «կենտրոնը» համոզված չէ իրենց կառավարութիւնների դեմ հեղափոխութիւն կատարելու անհրաժեշտութեան մեջ, հեղափոխութիւն չի քարոզում, հեղափոխական անձնակեր պայքար չի մղում, հորինում է նրանից խուսափելու ամենատոյր և արխի-«մարքսիստական» հնչող պատրվակներ:

Սոցիալ-չովինիստները մեր դասակարգային հակառակորդներն են, բուրժուաներ՝ բանվորական շարժման մեջ: Նրանք հանդիսանում են բանվորական այն խավի, խմբերի, միջնախավերի ներկայացուցիչները, վորոնք որյեկտիվ կերպով կաշառված են բուրժուազիայից (ակելի լավ վարձատրութիւն, պատվաւոր պաշտոններ և այլն) և ոգնում են

իրենց բուրժուազիային՝ կողոպտելու և խեղդելու մանր աւթույլ ժողովուրդներին, պայքարելու կապիտալիստական աշխարհ բաժանման համար:

«Կենտրոնը»—ուսումնային մարդիկ են, վորոնց կերել և ներկած լեզուութունը, վորոնք ապականվել են պառլամենտարիզմի միջավայրում և այլն, չինովնիկներ, վորոնք սովորել են տաքուկ պաշտոնների և «հանդիստ» աշխատանքի: Պատմականորեն և տնտեսականորեն տասած՝ նրանք առանձին խավ չեն ներկայացնում, նրանք միայն անցումն են բանվորական շարժման արդեն իր դարն անցրած ժամանակի շրջանից, 1871—1914 թվերի ժամանակաշրջանից, այն ժամանակաշրջանից, վորն արժեքավոր չափ բան է տվել առանձնապես պրոլետարիատի համար անհրաժեշտ՝ դանդաղ, տոկոս, սխտեմատիկ, կադակերպական լայն և լայնադույն աշխատանք կատարելու արվեստի բնագավառում,—անցումն են դեպի նոր շրջանը, վորն որչեղարիվորեն անհրաժեշտ է դարձել համաշխարհային իմպերիալիստական առաջին պատերազմից սկսած, վորը բաց է արել սոցիալիստական հեղափոխության դարագլուխը:

«Կենտրոնի» գլխավոր առաջնորդն ու ներկայացուցիչը Կարլ Կաուցկին է, II ինտերնացիոնալի (1889—1914) ամենականավոր հեղինակութունը, մարքսիզմի լիակատար կրթիչ, չլսված կամադրելության, 1914 թվի ոգոստոսից սկսած՝ ամենավողորմելի տատանումների և դավաճանութունների տիպարը: «Կենտրոնի» հոսանքի մեջ են՝ Կաուցկին, Հաադեն, Լեդերբուրը, այսպես կոչված «բանվորական կամ աշխատավորական ընկերակցությունը»¹ ռայսաուգում. Ժրանսիայում—Լոնդեն, Պրեմանը և այսպես կոչված «մի-նորիտյոները» (փոքրամասնականները) ընդհանրապես. Անդլիայում—Ֆիլիպպ Մնտուդենը, Ռամսեյ Մակդոնալդը և «անկախ բանվորական կուսակցության» ու մասամբ բրիտանական սոցիալիստական կուսակցության շատ ուրիշ

առաջնորդներ. Մորրիս Հիլկիլսը և շատ ուրիշներն Ամերիկայում. Տուբատին, Տրեվիսը, Մոդիլիանին և այլն Իտալիայում. Ռոբերտ Գրիմմը և այլն Շվեյցարիայում, Վիկտոր Ադլերը և Ընկ.՝ Ավստրիայում. Կադմկոմի կուսակցու-թյունը, Ահսելրոդը, Մարտովը, Չխեիձեն, Ծերեթելին և ուրիշները Ռուսաստանում և այլն:

Հասկանալի չէ, վոր առանձին անձեր յերբեմն, իրենց համար աննկատելի կերպով, սոցիալ-չովինիզմի գիրքից անցնում են «կենտրոնի» գիրքը և ընդհակառակը: Յուրաքանչյուր մարքսիստ գիտե, վոր դասակարգերը տարբերվում են միմյանցից, չնայած այն բանին, վոր անձնավո-րություններն ազատորեն դասակարգից դասակարգ են անց-նում. այդպես էլ քաղաքական կյանքում հոսանքները տար-բերվում են միմյանցից, չնայած անձնավորություններն ազատորեն մեկ հոսանքից մյուսն են անցնում, չնայած հո-սանքները միացնելու փորձերին ու ջանքերին:

3) Յերրորդ հոսանքը—գործով ինտերնացիոնալիստներն են, վորոնց ամենամոտ արտահայտությունն է «Յիմմերիալ-գի ձախը» (մենք հավելվածում տպագրում ենք նրա 1915 թվի սեպտեմբերի մանիֆեստը, վորպեսզի ընթերցողները բնագրով ծանոթանան տվյալ հոսանքի ծննդյանը)¹:

Գլխավոր տարբերիչ հատկանիշն է—բացարձակ խզումը թե՛ սոցիալ-չովինիզմից և թե՛ «կենտրոնից»: Հեղափոխա-կան անձնվեր պայքար իր իմպերիալիստական կառավարու-թյան և իր իմպերիալիստական բուրժուազիայի դեմ: Սկզբունքը—«գլխավոր թշնամին սեփական յերկրումն է»: Անողոր պայքար սոցիալ-պացիֆիստական (սոցիալ-պացի-ֆիստը խոսքով սոցիալիստ է, գործով՝ բուրժուական պացի-ֆիստ. բուրժուական պացիֆիստները յերազում են մշտնջե-նական խաղաղություն՝ առանց տապալելու կապիտալի-լումն ու տիրապետությունը) քաղցրիկ ֆրազի և բոլոր այն պատրվակների դեմ, վորոնց նպատակն է ժխտել պրոլետա-րիատի հեղափոխական պայքարի և պրոլետարական, ու-

¹ «Բանվորական կամ աշխատավորական ընկերությունը»-ը վորպես հորիզ ծառայեց Գերմանիայի Անկախ սոցիալ-դեմոկրատական կուսակ-ցության կադակերպման ժամանակ:

ցիալիտական հեղափոխութեան հնարավորութեան կամ տեղին կամ ժամանակին լինելը՝ սովյալ պատերազմի առնչութեամբ:

Այս հոսանքի ամենաականավոր ներկայացուցիչներն են Գերմանիայում՝ «Սպարտակի խումբը», կամ «Խնտերնացիոնալի խումբը»¹, վորի մեջ և Կարլ Լիբկնեխտը, վորպես նրա անդամ: Կարլ Լիբկնեխտն այդ հոսանքի և նոր, իսկական, պրոլետարական Խնտերնացիոնալի ամենանշանավոր ներկայացուցիչն է:

Կարլ Լիբկնեխտը կոչ արեց Գերմանիայի բանվորներին և ղեկավարներին զենքը դարձնել իրենց կառավարութեան դեմ: Կարլ Լիբկնեխտն այդ անում էր բացահայտ կերպով՝ պառլամենտի (ռայխտագի) ամբիոնից: Իսկ հետո անկեղալ սպառնալից թուրքիկներով նա պնայ Բեռլինի ամենամեծ հրապարակներից մեկը, Պոստամի հրապարակը, ցույցի՝ «Կորչի կառավարութեանը» կոչով: Նրան ձերբակալեցին և դատապարտեցին տաժանակիք աշխատանքի: Նա բոլոր նստած է տաժանակիքների բանտում՝ Գերմանիայում, ինչպես և ընդհանրապես Գերմանիայի հարյուրավոր, յեթե վոչ հազարավոր իսկական սոցիալիստները նստած են բանտերում՝ պատերազմի դեմ պայքարելու համար:

Կարլ Լիբկնեխտը ճառերով և նամակներով անողոր պայքար էր մղում վոչ միայն իրենց Պրեսիստներին, Պոստրեստներին (Շալեմաններին, Լեդիններին, Դավիդներին և Լեկ.) դեմ, այլև իրենց կենտրոնի մարդկանց դեմ, իրենց Չիեիձեններին, Ծերեթեխներին (Կաուցկու, Հապելյե, Լեդերուրի և Լեկ.) դեմ:

Կարլ Լիբկնեխտն իր բարեկամ Ռոտտ Ռյուլենյի հետ

միասին, յերկուսով՝ հարյուր տասը դեպուտատներեց, խախտեցին կարգապահութիւնը, խորտակեցին «միասնութիւնը» «Լեխտոնի» և չովինիստների հետ, զնացին ընդդեմ բոլորի: Միայն Լիբկնեխտն և ներկայացնում սոցիալիզմը, պրոլետարական գործը, պրոլետարական հեղափոխութիւնը: Գերմանական մնացած ամբողջ սոցիալ-դեմոկրատիան, Ռոդա Լուքսեմբուրգի (նույնպես «Սպարտակի խումբի») անդամ և նրա առաջնորդներից մեկը) ձիւտ արտահայտութեամբ՝ մի գարշահոտ դիակ է:

Գործով ինտերնացիոնալիստների մյուս խումբը Գերմանիայում—Բրեմենի «Բանվորական Գաղաքականութիւն» լրագիրն է:

Յրանսիայում գործով ինտերնացիոնալիստներին ամենից մոտ է Լորիոն և նրա բարեկամները (Բուրգերոնը և Մերհայմը սահեցին դեպի սոցիալ-պայքիֆիզմը), ինչպես և Ֆրանսիացի Անրի Գիլլոն, վոր ժենեվում հրատարակում էր «Վաղը» ժուռնալը, Անգլիայում—«Տրեդ-Յունիոնիստ» լրագիրը և Բրիտանական Սոցիալիստական Կուսակցութեան ու Անկախ Բանվորական Կուսակցութեան անդամների մի մասը (որ. Վիլիամ Ռյոսսելը, վորը բացահայտ կերպով կոչ էր անում անջատվել սոցիալիզմին դավաճանած առաջնորդներից), չոտլանդական ժողովրդական ուսուցիչ սոցիալիստ Մալլիկը, վորն Անգլիայի բուրժուական կառավարութեան կողմից դատապարտված է տաժանակիք աշխատանքի՝ պատերազմի դեմ հեղափոխական պայքար մղելու համար. Անգլիայի հարյուրավոր սոցիալիստներ նույն հանցանքների համար նստած են բանտերում: Նրանք և միմիայն նրանք են գործով ինտերնացիոնալիստները. Ամերիկայում—«Սոցիալիստական Բնավորական Կուսակցութիւնը» և ոպորտունիստական «Սոցիալիստական Կուսակցութեան» ներսի այն տարրերը, վորոնք 1917 թվի հունվարից սկսել են հրատարակել «Խնտերնացիոնալիստ» լրագիրը. Հոլանդիայում—«աբիբուսիստներ» կուսակցութիւնը, վոր հրատարակում էր «Տրիբունա» լրագիրը (Պաննեկուկ, Հերման Գորտեր,

¹ Գերմանական ձախ սոցիալ-դեմոկրատների «Խնտերնացիոնալ» խմբի մեջ մտնում էին Կ. Լիբկնեխտը, Ռ. Լուքսեմբուրգը, Յր. Մերիլը, Պ. Յետկինը, Լեո Յոգիլսը (Տիլլո) և ուրիշն: Խումբը հայտնի չէ նաև սպարտակյաներ անունով, վորովհետև նրա «Գաղաքական նամակներ» թուրքիկները (վորոնց հեղինակը Ռ. Լուքսեմբուրգն էր) հրատարակելու էին «Սպարտակ» ստորագրութեամբ:

Վայնիկոյ, Հենրիետա Ռուանդ-Հոլտ), վորը Յիմմերվալդում հանդիսանում եր կենտրոն, իսկ այժմ մեր կողմն ե անցել։ Շվեդիայում—յերիտասարդների կամ ձախերի կուսակցութունն այնպիսի առաջնորդներով, ինչպիսիք են՝ Լինդհագենը, Տուրե Ներմանը, Կարլսոնը, Ստրեմը, 2. Հեգլունդը, վոր անձամբ մասնակցել ե Յիմմերվալդում «Յիմմերվալդի Ձախի» հիմնադրմանը և ներկայումս դատապարտված ե բանտարկության՝ պատերազմի դեմ հեղափոխական պայքար մղելու համար։ Դանիայում—Տրերը և նրա բարեկամները, վորոնք հեռացել են Դանիայի միմիստը Ստաոնինդի գլխավորությամբ միանգամայն բուրժուական դարձած՝ «սոցիալ-դեմոկրատական» կուսակցութունից։ Բուլղարիայում—«տեսնյակներ»-ն¹։ Խառլիայում—ամենից մոտ ե կուսակցության քարտուղար Կոնստանտին Լաճարին և «Հառաջ» կենտրոնական ուղղանի խմբագիր Սերբատին։ Լեհաստանում—Ռադեկը, Դանեցիկին և «Յերկրային Վարչության» շուրջը համախմբված սոցիալ-դեմոկրատիայի մյուս առաջնորդները։ Ռուս Լուքսեմբուրգը, Տիչկոն և «Գլխավոր վարչության» շուրջը համախմբված սոցիալ-դեմոկրատիայի մյուս առաջնորդները։ Շվեյցարիայում—այն ձախերը, վորոնք կազմել են «ռեֆերենդումի» պատճառաբանությունը (1917 թ. հունվար) իրենց յերկրի սոցիալ-չովինիստների և «կենտրոնի» դեմ պայքարելու համար և վորոնք Յյուրիխի կանտոնային սոցիալիստական համագումարում, Տեսսում, 1917 թ. փետրվարի 11-ին սկզբունքորեն հեղափոխական բանաձև մտցրին պատերազմի դեմ²։ Ավստրի-

1 Տեսնյակներ—1903 թ. բուլղարական սոցիալ-դեմոկրատիայից անջատված հեղափոխական թիւը։ III ինտերնացիոնալի կազմակերպման մոմենտին հարեցին նրան։

2 Շվեյցարական ձախերը—«Պրայե Յուդենդ» («Ազատ յերիտասարդութուն») ժուռնալի շուրջը խմբված այն սոցիալ-դեմոկրատներն էյին, վորոնք դեպի իմպերիալիստական պատերազմն ունենալիք վերաբերմունքի հարցի քննարկության համար կուսակցական

այում—Տրերը իս Ադլերի յերիտասարդ բարեկամները ձախից, վորոնք մասամբ դործում էյին Վինենայի «Կարլ Մարքս» ակումբում, —ակումբ, վորը ներկայումս փակված ե ավստրիական ամենառեակցիոն կառավարության կարգադրությամբ, —կառավարություն, վոր կործանում ե Պր. Ադլերին՝ միմիստի վրա կրակելու նրա հերոսական, թեև քիչ մտածված, քայլի համար և այլն և այլն։

Բանն այն յերանդները չեն, վոր գոյություն ունեն նաև ձախերի մեջ։ Բանը հոսանքն ե։ Ամբողջ եյությունն տյն ե, վոր իմպերիալիստական զարհուրելի պատերազմի դարաշրջանում հեշտ չե գործով ինտերնացիոնալիստ լինել։ Այդպիսի մարդիկ քիչ են, բայց միմիայն նրանք են սոցիալիզմի ամբողջ ապագան, միմիայն նրանք են մասաների առաջնորդները, և վոչ թե մասաներին անբարոյականացնողները։

Տարբերությունը ռեֆորմիստների և հեղափոխականների միջև, սոցիալ-դեմոկրատների մեջ, առհասարակ սոցիալիստների մեջ, որչեկտիվ անիուստիելությամբ վոլիտիստություն պետք ե կրեր իմպերիալիստական պատերազմի պայմաններում։ Ով սահմանափակվում ե բուրժուական կառավարություններին հաշտություն կնքելու կամ «ժողովուրդների հաշտության ձգտելու կամքը դրսևորելու» և այլ «պահանջներ առաջադրելով», նա գործնականում դուրսվում ե դեպի ռեֆորմները։ Վորովհետև պատերազմի հարցը, որչեկտիվորեն, դրված ե միմիայն հեղափոխականորեն։

Պատերազմից յեւք չկա դեպի դեմոկրատական, վոչ-բունի հաշտությունը, դեպի ժողովուրդների ազատագրումը պարոն կապիտալիստներին միլիարդավոր տոկոսներով ստրկանալուց, վորոնք հարստություններ են կուտակել

արտակարգ համագումար հրավիրելու հարցի առթիվ պահանջում էյին կուսակցության բոլոր անդամների ընդհանուր քվեարկություն (ռեֆերենդում) անցկացնել։ Համագումարի հրավիրումը ձախողեցին ցենտրիստները Ռ. Գրիմմի գլխավորությամբ։

«պատերազմում», — չկա յեւք, բացի պրոլետարիատի հեղափոխութիւնից:

Բուրժուական կառավարութիւններէց կարելի չեւ պետք եւ պահանջել ամենաբազմազան ռեֆորմներ, բայց չի կարելի առանց մանիֆէստացի, ռեֆորմիզմի մեջ ընկնելու՝ իմպերիալիստական կապիտալի հազարաւոր թեւերով խճճված այդ մարդկանցից եւ դասակարգերէց պահանջել, վոր կտրտեն այդ թեւերը, իսկ առանց այդ թեւերը կտրտելու, բոլոր խոսակցութիւնները պատերազմի դեմ պատերազմ հայտարարելու մասին, — դատարկ, խաբէյական ֆրաշներ են:

«Կառուցիկականներ», «կենտրոնը» — դրանք խոսքով հեղափոխականներ են, դործով՝ ռեֆորմիստներ, խոսքով ինտերնացիոնալիստներ են, դործով՝ սոցիալ-չովինիզմի աշակերցներ:

ՅԻՄՄԵՐՎԱԼԴԻ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԻ ԿՐԱՆԸ:— ԱՆՀՐԱԺԵՇՏ Ե ՀԻՄՆԵԼ III ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼ

17. Յիմմերվալդի Ինտերնացիոնալը հենց սկզբից տառանդող, «կառուցիկական», «կենտրոնային» դիրք բռնեց, վորպիսի հանգամանքը հարկադրեց Ձախ Յիմմերվալդին անմիջապէս սահմանորոշվել, առանձնանալ, հանդես գալ իր մանիֆէստով (տպագրված եւ Շվեյցարիայում ուղարկեն, գերմաներեն եւ ֆրանսերեն):

Յիմմերվալդի Ինտերնացիոնալի գլխավոր թերութիւնը, նրա կրախի (վորովհետեւ նա արդեն դադարաբաշխաբանորեն սնանկացել էր) պատճառն այն տատանումներն ու անվճռականութիւնն են, վոր նա ցուցաբերում էր սոցիալ-չովինիզմից եւ Վանդերվելդեյի, Հյուլսմանսի եւ ուրիշների գլխավորութեամբ Հաադայում (Հոլլանդիա) դործող սոցիալ-չովինիստական հին Ինտերնացիոնալից կապերն ամբողջովին խզելու ամենակարեւոր, պրակտիկորեն ամեն ինչ վորոշող հարցում:

Մեզ մոտ դեռեւս չգիտեն, վոր Յիմմերվալդի մեծամասնութիւնը հենց կառուցիկականներն են: Մինչդեռ այդ հիմնական փաստ եւ, վորը չի կարելի հաշիւ չառնել եւ վորն այժմ հանրահայտ եւ Արեւմտյան Յեւրոպայում: Նույնիսկ արիւն-չովինիստական «Քեմնիցի Լրագրի» խմբագիր եւ Պարվուսի արիւն-չովինիստական «КОЛОКОЛ»-ի աշխատակից չովինիստ, ծայրահեղ գերմանական չովինիստ Հայրմանը (հասկանալի չե՝ «սոցիալ-դեմոկրատ» եւ սոցիալ-դեմոկրատիայի «միասնութեան» կատաղի կողմնակից) ստիպված յեղավ մամուլում խոստովանել, վոր կենտրոնը կամ «կառուցիկականութիւնն» ու Յիմմերվալդի մեծամասնութիւնը միեւնոյն բանն ե:

Իսկ 1916 թվի վերջը եւ 1917 թվի սկիզբը վերջնականապէս հաստատեցին այդ փաստը: Չնայած Կինտալի մանիֆէստը դատապարտեց սոցիալ-պացիֆիզմը, ամբողջ աշխարհում Յիմմերվալդը, Յիմմերվալդի ամբողջ մեծամասնութիւնը շուրջից դեպի սոցիալ-պացիֆիզմը. Կառուցիկն եւ Ընկ. 1917 թվի հունվարի եւ փետրվարի մի շարք յերւոյթներում. Բուրգերները եւ Մերհեյմը Ֆրանսիայում՝ միաբանած սոցիալ-չովինիստների հետ միասին քվեարկելով (1916 թ. դեկտեմբերին) հոգուտ սոցիալիստական կուսակցութեան եւ «աշխատանքի գլխավոր կոնֆեդերացիայի» (այսինքն՝ ֆրանսական արհեստակցական միութիւնների համագործակցի կազմակերպութեան, նույնպէս 1916 թ. դեկտեմբերին) պացիֆիստական բանաձեւերի. Տուրատին եւ Ընկ. Իտալիայում, վորտեղ ամբողջ կուսակցութիւնը սոցիալ-պացիֆիստական դիրք եւ բռնել, իսկ Տուրատին անձամբ «սայթաքել ե» (իհարկեւ, վոչ պատահաբար) մինչեւ իմպերիալիստական պատերազմը գեղազարդող ազգայնական ֆրազները 1916 թ. դեկտեմբերի 17-ի ճառում:

Յիմմերվալդի եւ Կինտալի նախագահ Ռորերտ Գրիմմը 1917 թ. հունվարին դաշնակցեց իր կուսակցութեան սոցիալ-չովինիստների (Գրեյլիս, Պիլլուդեր, Գուտտալ Մյուլլեր եւ ուրիշն.) հետ՝ դործով Ինտերնացիոնալիստների դեմ:

1917 թվի հունվարին և փետրվարին զանազան յերկր-
ներ ընդհանրապես կանգնեցին յերկու խորհրդակցութիւննե-
րում միեման յերկրներ ձախ ինտերնացիոնալիստները—
յերիտասարդներն միջազգային կազմակերպութեան քարտու-
ղար և «Յերիտասարդութեան ինտերնացիոնալ» հիմնադրի
ինտերնացիոնալիստական լրագրի խմբագիր Մյունխենքերդը,
մեր կուսակցութեան Կենտկոմի ներկայացուցիչ Ջինովյեւը,
լեհական սոցիալ-դեմոկրատական կուսակցութեան («յերկ-
րային վարչութիւն») ներկայացուցիչ Կ. Ռադեկը, գեր-
մանական սոցիալ-դեմոկրատ, «Սպարտակ Սմերի» անդամ
Հարտշտայնը—Փորմալ կերպով դատապարտեցին Յիմմեր-
վալդի մեծամասնութեան այդ յերկակի և յերկդիմէ վար-
մունքը:

Ռուսական պրոլետարիատին շատ բան է տրված. աշ-
խարհում վոչ մի տեղ բանվոր զստակարգին դեռևս չի
հաջողվել աջակիսի հեղափոխական յեռանդ ծախալել, ինչ-
պես Ռուսաստանում: Բայց ում շատ է տրված, նրանից
շատ էլ կպահանջվի:

Յիմմերվալդի ճահիճն այլևս չի կարելի հանդուրժել:
Յիմմերվալդի «կաուցիականների» պատճառով չի կարելի
այլևս Պլեխանովների և Շալդեմանների շովինիստական ին-
տերնացիոնալի հետ կիսով չափ կապված մնալ: Անհապաղ
պետք է կտրել կապերն այդ ինտերնացիոնալից: Յիմմեր-
վալդում պետք է մնալ միմիայն ինֆորմացիայի համար:

Հենց մենք, հենց այժմ, առանց հասարակելու պետք է
հիմնենք նոր հեղափոխական, պրոլետարական ինտերնացիո-
նալ, կամ ավելի ճիշտ՝ չվախենալ ի լուր ամենի խոստո-
վանել, վոր այն արդեն հիմնված է և գործում է:

Դա այն «գործով ինտերնացիոնալիստների» ինտերնա-
ցիոնալն է, վորոնց յես վերը ճշտիվ թվարկեցի: Նրանք և
միմիայն նրանք են հեղափոխական ինտերնացիոնալիստական
մասսաների ներկայացուցիչները և վոչ թե մասսաներին
այլասերողները:

Յեթե քիչ են այդպիսի սոցիալիստները, ապա յուրա-

քանչյուր ուսումնասիրող թող հարց տա իրեն, թե արդյոք
Ռուսաստանում շա՞տ դիտակից հեղափոխականներ կային
1917 թվի փետրվարյան և մարտյան հեղափոխութեան նա-
խորդակին:

Բանը թիվը չէ, այլ իսկական հեղափոխական պրոլե-
տարիատի զաղափարներն ու քաղաքականութիւնը ճիշտ
արտահայտելը: Եյութիւնն ինտերնացիոնալիզմի «հռչակու-
մը» չէ, այլ այն, վոր կարողանանք նույնիսկ ամենագովար
ժամանակներում գործով ինտերնացիոնալիստներ լինել:

Համաձայնութիւնների և միջազգային կոնգրեսների
հուսով չխաբւմենք: Միջազգային հարաբերութիւնները,
քանի դեռ շարունակվում է իմպերիալիստական պատերազ-
մը, սեղմված են իմպերիալիստական—բուրժուական ուղմա-
կան դիկտատուրայի յերկաթե ճիրաններում: Յեթե նույ-
նիսկ «հանրապետական» Միլյուկովը, վորը հարկադրված էր
հանդուրժել Բանվորների Դեպուտատների Սորհրդի կողմ-
նակի կառավարութիւնը, 1917 թ. ապրիլին Ռուսաստան
չթողեց չվեյցարական սոցիալիստ, կուսակցութեան քաղ-
տուղար, ինտերնացիոնալիստ, Յիմմերվալդի և Կինտայի
մասնակից Յրից Պլատոնիւն, թեև նա ամուսնացած է ուս-
կնոջ հետ և դնում էր իր կնոջ ազգականների մոտ, թեև նա
1905 թվին Ռիգայում մասնակցել է հեղափոխութեանը, դրտ
համար նստել է ուսանական բանտ, ազատվելու համար գրա-
վական է տվել ցարական կառավարութեանը, ցանկացել է
հետ ստանալ այդ գրավականը,—յեթե հանրապետական
Միլյուկովն այդ կարողացավ անել 1917 թ. ապրիլին, Ռու-
սաստանում, ապա կարելի չէ դատել, թե ինչ արժէք ունեն
բուրժուազիայի խոստումներն ու առաջարկները, Քրազներն
ու ղեկավարացիները՝ առանց աննեքսիաների հաշտութեան
մասին և այլն:

Իսկ Տրոցկու ձերբակալութիւնն անդլիական կառա-
վարութեան կողմից: Իսկ Մարտովին Շվեյցարիայից հեռա-
նալ թույլ չտա՞լը, իսկ Մարտովին Անգլիա գնալ հրապու-
րելու հուլիսէ՞րը, վորտեղ նրան սպասում է Տրոցկու
վիճակը:

Պատրանքներ չստեղծենք մեզ համար: Ինքնախաբեյու-
թյուն հարկավոր չէ:

Միջազգային կոնգրեսների կամ խորհրդակցություննե-
րի «սպասել», նշանակում է լինել ինտերնացիոնալիզմի դա-
վանան, քանի վոր ապացուցված է, վոր նույնիսկ Ստոկհոլ-
մից մեզ մոտ չեն ընդունում վո՛չ ինտերնացիոնալիզմին
հավատարիմ սոցիալիստների, վո՛չ նույնիսկ նամակներ
նրանցից՝ չնայած ռազմական զբաղնություն ունեցած լիա-
կատար հնարավորություն և բացարձակ դատարանություն:

Մեր կուսակցությունը պետք է վո՛չ թե «սպասել», այլ
խեղձն Էիմմի յերրորդ Ինտերնացիոնալ,—և հարյուրավոր
սոցիալիստներ Գերմանիայի ու Անգլիայի բանտերում աղատ
չունչ կրաչեն, հազար-հազարավոր զերմանական բանվոր-
ներ, վորոնք այժմ գործադուլներ և ցույցեր են կազմակեր-
պում՝ վախեցնելով սրիկա և ավազակ Վիլհելմին, անլեգալ
թերթիկներում կկարդան մեր վորոշման մասին, մեր յեղ-
բայրական վստահություն մասին Կարլ Լիբկնեխտի և միմի-
այն նրա հանգեպ, մեր վորոշման մասին՝ այժմ նույնպես
պայքարելու «հեղափոխական պաշտպանողականություն»
դեմ,—կկարդան այն և կամրանան իրենց հեղափոխական
ինտերնացիոնալիզմի մեջ:

Ում շատ է տրված, նրանից շատ էլ կպահանջվի: Աշ-
խարհում չկա մի յերկիր, վորտեղ այժմ այնպիսի աղատու-
թյուն լինի, ինչպես Ռուսաստանում: Ոգտվենք այդ աղա-
տությունից վո՛չ թե բուրժուազիայի կամ բուրժուական «հե-
ղափոխական պաշտպանողականություն» պաշտպանության
ոգտին քարոզելու, այլ համարձակ և ազնվորեն պրոբատա-
բական և լիբկնեխտական յերրորդ Ինտերնացիոնալ Էիմմե-
լու համար, Ինտերնացիոնալ, վորն անդառնալիորեն թշնա-
մի լինի թե՛ դավաճաններին—սոցիալ-չովինիստներին և
թե՛ «կենտրոնի» տատանվող մարդկանց:

18. Այն մասին, վոր սոցիալ-դեմոկրատներին Ռուսաս-
տանում միավորելու վերաբերյալ խոսք անդամ չի կարող

լինել, վերը առածներից հետո շատ խոսք վառնելու կարիք
չկա:

Ավելի լավ է մնալ յերկուսով, ինչպես Լիբկնեխտը,—
և այդ նշանակում է մնալ հեղափոխական պրոլետարիատի
կեստ,—քան թեկուզ մի բոսպե մտածել Կադմիկոնի կուսակցու-
թյան, Ջիեիձեյի և Ծերեթելու հետ միանալու մասին, վո-
րոնք հանդուրժում են Պոտրեսովի հետ կնքած բլոկը «Ра-
бочая Газета»-յում, վորոնք Բանվորների Դեսյուտատների
Խորհրդի Գործադիր Կոմիտեյում քվեարկում են հոգուս
փոխառության¹, վորոնք գլորվել են դեպի «պաշտպանողա-
կանություն»:

Թող մեռածները թաղեն իրենց մեռելներին:

Ով ցանկանում է ոգնել տատանվողներին, պետք է սկսի
նրանից, վոր ինքը դադարի տատանվելուց:

ԻՆՉ ՊԵՏՔ Ե ԼԻՆԻ ՄԵՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆՈՐԵՆ ՃԻՇՏ ՅԵՎ ՔՍՂԱՔԱԿԱՆՈՐԵՆ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԳԻՏԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՐՁԵԼՈՒՆ ՈՃԱՆԴԱԿՈՂ ԱՆՈՒՆԸ

19. Անցնում եմ վերջին հարցին, մեր կուսակցության
անվանը: Մենք պետք է կոչվենք Կոմունիստական կուսակ-
ցություն,—ինչպես իրենց անվանում էյին Մարքսն ու Են-
գելսը:

Մենք պետք է կրկնենք, վոր մենք մարքսիստներ ենք և
վորպես հիմք ընդունում ենք «Կոմունիստական Մանիֆեստը»,
վորն աղճատել և վորին դավաճանել է սոցիալ-դեմոկրա-
տիան յերկու գլխավոր կետերում. 1) բանվորները հայրենիք
չունեն. «հայրենիքի պաշտպանություն» իմպերիալիստական
պատերազմում նշանակում է դավաճանություն սոցիալիզ-

¹ «Աղատության փոխառություն», վորը Ժամանակավոր կառավա-
րությունը բաց էր թողել իմպերիալիստական պատերազմը շարունակե-
լու համար:

մին, 2) II Ինտերնացիոնալն աղճատել է մարքսիզմի ուսմունքը պետութեան մասին:

«Սոցիալ-դեմոկրատիա» անունը գիտականորեն սխալ է, ինչպես բազմիցս ցույց է տվել Մարքսը, իմիջի այլոց, նաև «Գոթայի ծրագրի քննադատութեան» մեջ 1875 թ. և ավելի մատչելի ձևով կրկնել է Ենգելսը 1894 թվին: Մարքսիսթյունը կապիտալիզմից կարող է անմիջականորեն անցնել միայն սոցիալիզմին, այսինքն՝ արտադրութեան միջոցներին ընդհանուրի կողմից տիրապետելուն և մթերքները համաձայն յուրաքանչյուրի կատարած աշխատանքի բաշխելուն: Մեր կուսակցութեանն ավելի հեռուն է նայում. սոցիալիզմը պետք է անխուսափելիորեն աստիճանաբար վերաճի կոմունիզմի, վորի դրոշակի վրա գրված է՝ «ամեն մեկին ըստ իր ընդունակութեանների, ամեն մեկին ըստ իր պահանջմունքների»:

Այս է իմ առաջին փաստարկը:

Յերկրորդ՝ դիտականորեն սխալ է մեր կուսակցութեան անվան նաև յերկրորդ մասը (սոցիալ-դեմոկրատներ): Դեմոկրատիան պետութեան ձևերից մեկն է: Մինչդեռ մենք, մարքսիստներս, հակառակ ենք ամեն տեսակ պետութեան:

II Ինտերնացիոնալի (1889—1914) առաջնորդները, պ. պ. Գլեխանովը, Կաուցկին և նրանց նմանները, գոհակացրել և աղճատել են մարքսիզմը:

Մարքսիզմն անարխիզմից տարբերվում է նրանով, վոր ընդունում է պետութեան անհրաժեշտութիւնը սոցիալիզմին անցնելու համար, — սակայն (և սրանում է տարբերութիւնը Կաուցկուց և Ընկ.) վն'չ քե այնպիսի պետութեան, վորպիսին սովորական պառլամենտական բուրժուական դեմոկրատական հանրապետութիւնն է, այլ այնպիսի պետութեան, ինչպիսին 1871 թ. Փարիզի Կոմունան է, ինչպիսին 1905 և 1917 թվերի Բանվորների Դեպուտատների Խորհուրդներն են:

Իմ յերրորդ փաստարկը՝ կյանքը ստեղծել է, հեղափոխութիւնը ստեղծել է մեզ մոտ արդեն գործնականում,

թեև թույլ, սաղմնային ձևով, հենց այդ նոր «պետութիւնը», վորը պետութիւնն չէ բառի իսկական իմաստով:

Այդ արդեն մասսաների պրակտիկայի հարցն է, և վոչ թե միայն առաջնորդների թեորիան:

Պետութիւնն՝ այդ բառի իսկական իմաստով՝ ժողովրդից առանձնացված զինված մարդկանց ջոկատների իշխումն է մասսաների վրա:

Մեր ծնվող, նոր պետութիւնը նույնպես պետութիւն է, վորովհետև մեզ անհրաժեշտ են զինված մարդկանց ջոկատներ, անհրաժեշտ է ամենախիստ կարգ, անհրաժեշտ է ամուղափաքար, բռնի ուժով ճնշել թե՛ ցարական, թե՛ Գուշկովյան-բուրժուական հակահեղափոխութեան ամեն մի փորձ:

Սակայն մեր ծնվող, նոր պետութիւնն արդեն պետութիւնն չէ բառիս իսկական իմաստով, վորովհետև Ռուսաստանի մի շարք վայրերում զինված մարդկանց այդ ջոկատները հենց ինքը մասսան են, ամբողջ ժողովուրդը և վոչ թե այնպիսի մեկը, վոր նշանակված է նրա զլխին, անջատված է նրանից, արտոնյալ է, գործնականապես անսկիզբի:

Վո՛չ թե հետ պետք է նայել, այլ առաջ, վո՛չ թե դեպի սովորական բուրժուական տիպի այն դեմոկրատիան, վորն ամբացրել է բուրժուազիայի տիրապետութիւնը կառավարման հին, միապետական մարմինների՝ վոստիկանութեան, բանակի, չինովնիկութեան միջոցով:

Պետք է նայել առաջ, դեպի ծնվող նոր դեմոկրատիան, վորն արդեն դադարում է դեմոկրատիա լինելուց, վորովհետև դեմոկրատիան ժողովրդի տիրապետութիւնն է, իսկ ինքը զինված ժողովուրդը չի կարող իր վրա իշխել:

Դեմոկրատիա բառը միայն դիտականորեն չէ, վոր սխալ է կոմունիստական կուսակցութեան վերաբերմամբ կիրառելիս: Նա այժմ, 1917 թվի մարտից հետո, մի աչքակալ է, վոր հաղցվում է հեղափոխական ժողովրդին և խանգարում է նրան պատ, համարձակ, ինքնուրույն կառուցելու նորը՝ Բանվորների, Դյուղացիների և ամեն տեսակ այլ

Իսկ հակառակ փաստարկները... «Կշիթեն անար-
խիտ-կոմունիստների հետ»...

Ինչո՞ւ մենք չենք վախենում սոցիալ-նացիոնալների և
սոցիալ-լիբերալների, ռադիկալ-սոցիալիստների՝ Ֆրանսա-
կան հանրապետության մեջ մասսաների բուրժուական խա-
բեյության դործում ամենաառաջավոր և ամենաճարպիկ
այդ բուրժուական կուսակցության հետ շփոթվելուց...
«Մասսաները վարժվել են, բանվորները «սիրում են» իրենց
սոցիալ-դեմոկրատական կուսակցությանը»...

Ահա միակ փաստարկը. բայց չե՞ք վոր այդ փաստարկը
մի կողմ է չարտում թե՛ մարքսիզմի գիտությունը, թե՛
վաղվա խնդիրները հեղափոխության բնադալառում, թե՛
համաշխարհային սոցիալիզմի օբյեկտիվ դրությունը, թե՛
[[Ինտերնացիոնալի խայտառակ կրախը, թե՛ պրակտիկ
դործի փչացումը պրոլետարներին խմբերով չընթացող
«նույնպես սոցիալ-դեմոկրատներին» կողմից:

Այդ—ոռութիւնայի փաստարկն է, քննածության փա-
տարկը, անշարժության փաստարկը:

Իսկ մենք ցանկանում ենք վերակառուցել աշխարհը:
Մենք ցանկանում ենք վերջ տալ համաշխարհային իմպերիա-
լիստական պատերազմին, վորի մեջ ներգրավված են հա-
րյուր-միլիոնավոր մարդիկ, խճճված են կապիտալի հա-
րյուրավոր և հարյուրավոր միլիարդների շահերը, վորը չի
կարելի վերջացնել իսկական դեմոկրատական հաշտության
առանց մեծագույն պրոլետարական հեղափոխության՝ մարդ-
կության պատմության մեջ:

Յեւ մենք ինքներս մեզնից ենք վախենում: Մենք կառ-
չել ենք մեր «սովորական», «սիրելի» կեղտոտ շապիկն...

Ժամանակն է դեն չարտել կեղտոտ շապիկը, ժամա-
նակն է մաքուր սպիտակեղեն հագնել:

Պետրոգրադ, 10 ապրիլի 1917 թ.:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Պրալետարական կուսակցության պատժուրմի նախագիծ . . .	3
Տեղի ունեցած հեղափոխության դասակարգային բնույթը . . .	3
Նոր կառավարության արտաքին քաղաքականությունը . . .	5
Յուրօրինակ յերկրխանությունը և նրա դասակարգային նշանակու- թյունը	7
Տակալկայի՝ նախընթացից բղխող յուրօրինակությունը . . .	11
Հեղափոխական պաշտպանողականությունը և նրա դասակարգային նշանակությունը	13
Ի՞նչպես կարելի յե վերջացնել պատերազմը	16
Պետության նոր տիպը, վորն աճում է մեր հեղափոխության մեջ . . .	17
Ագրարային և ազգային ծրագրեր	22
Կապիտալիստների բանկերի և սինդիկատների նացիոնալիզացիան . .	25
Իրերի դրությունը սոցիալիստական Ինտերնացիոնալում . . .	26
Ցիմմերվալդի Ինտերնացիոնալի կրախը—Անհրաժեշտ է հիմնել III Ինտերնացիոնալ	36
Ի՞նչ պետք է լինի մեր կուսակցության գիտականորեն ճիշտ և քա- ղաքականորեն պրոլետարիատի գիտակցությունը պարզելուն ոժանդակող անունը	41



ՎՐԻՊԱԿՆԵՐ			
	Տաղ	Տաղված է	Պետք է լինի
12	6 զ.	աղատադրվելով	աղատադրվել
30	3 ն.	ընկերություն-ը	ընկերակցություն-ը
33	6 »	ընտելության	ընտելության

Հայերեն թարգմանության խմբագիր Տ. Ալեքսանյան

Տեխն. խմբ. Ս. Խաչատրյան

Սրբադրիչ Հ. Մանվելյան

Կոնարտի սրբադրիչ Լ. Սրբովյան

Գլավիտի լիազոր № Ն. 2825, հրատ. № 652,

Պատվեր № 45, տիրաժ 5000

Թղթի չափսը $70 \times 86 \frac{1}{16}$ (32.500 տպ. նիշ 1 տպ. մամուլում)

3 տպ. մամուլ, $1 \frac{1}{2}$ թերթ թուղթ,

Հանձնվել է տրտադրության 22/II 1939 թ.

Ստորագրվել է տպագրելու 16/III 1939 թ.

Գինը 30 կ. կադմը 45 կ.

Պետհրատ—Քաղաքական գրականության հրատարակչության
տպարան, Յերևան, Ալլահվերդյան № 65

ՀՀ Ազգային գրադարան



NL0179141

